



12006



LESTER

NO. 103



US 41

FRUIT AND VEGETABLES

1831



NEW YORK

Հաւատով խոսողանիմ իմ և երկիր
պարանետ քեզ անբաժանելե լցս
միանական սբ երբորուի և մի
նձութի . արտիկ լուսց և հա
լածիկ խաւարի . հալածեալ ՚ի հը
դւոց խմկ զխաւար մեզաց և ան
գիտուե . և լուսաւորեալ բզմիսս
իմ ՚ի ժամուս յայսմիկ արթիւ
քեզ ՚ի հաճցս և ընդունիկ ՚ի քէն
զմեր լուծաս իմ . և ող :

Հայր երկնաւոր նձ ճշմարիտ՝ որ
աւարեցեբ զորդիդ քս սիրելե ՚ի
խնդիր մեղքե և ոչխարին մեզոց յեբ
կինս և առաջե քս . ընկալ զնս ող
գանառակ որդին՝ և զգեցո ինձ բզ
պատմու ճանն զառջին զոր մեկնա
ցայ մեզոք . և ող :

Որդի նց նձ ճշմարիտ՝ որ խոնար
հեցար ՚ի հայրական ծոցց և առեբ
մարմին ՚ի նբլ կուսէն մտքամոց

Նաէն նձ՝ ամենաւակ նձ՝
աւերկից նձ՝ ամենասուրբ ա
մենորոք նձ՝ ամենամեծ նձ
ամենամարու նձ՝ ամենաշն
նձ՝ ամենաբնդունակ նձ՝ ա
բնդունող նձ՝ ամենաբաժնաւ
ամենաթագ նձ՝ ամենաթագ
նձ՝ ամենաժառանգ նձ՝
խան նձ՝ ամենաբաշխող ա
խնաստ նձ՝ ամենախաւ նձ՝
նայցս նձ՝ ամենախիբ նձ՝ ա
լուսն նձ՝ ամենախնամ նձ՝
նախնածօղ նձ՝ ամենախոս ն
մենախրատող նձ՝ ամենախորին
ամենախոր զբք նձ՝ ամենաբ
նձ՝ ամենածագունն նձ՝ ա
գուլ նձ՝ ամենածաւալ նձ՝
նակալ նձ՝ ամենակարօղ նձ՝
նակիր նձ՝ ամենակրօղ նձ՝ ա
կայծ նձ՝ ամենակատար նձ՝

205
4-29

ԿՐ.

838-164

Լ. Լ. Պ Տ Ե Ր

Տ Ո Պ Ի Ն Ո Յ

Պ Տ Ե Կ արապեա Լ քբեալիս
կոպոսէ և Պատրիարքէ
Կոստանդնուպոլսոյ :

Յ Օ Ր Ի Ն Ե Ա Լ

Պ Յ յօգուա Լ րուսաւորչածին
օրհնեալ ազգիս հայոց :



Տպագրեալ չորրորդ անգամ յաւելմամբ
ինչ ինչ հարկաւորաց ՚ի հեղինակէն :

1831 ————— յւր Է

Պ Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ի Պ Օ Լ Ի Ս :

՚ի Տպարանի Պօզոսի արապեան տպուչէլոցոյ :

[Faint, illegible handwritten text at the top of the page]

* Յայնժամ նմանեցի արքայու-թի
երկնից տասն հոսանաց, որոց առ-
եալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ
առաջ փեսայի և հարսին: ॥ Յապ. Ի. 1:

3911-46 15812-58



(3034-48)

ՄԱՍՆ ԱՌԵՏԻՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԱՆՔԻԼՊԵՏՈՒԹԻՒՆ



Հարցումն: **Ս**իրելի եղբայր՝ դու զի՞նչ
ես:

Պատասխանի: Փառք այ, Վրիստոնեայ եմ:

Հարց: Ի՞նչ բանով վրիստոնեայ եղար:

Պատ: Մի աւաղանի շնորհօքը, երբ մը
կըրտեցայ յանուն հօր և որդւոյ և հոգւոյն
մբջ:

Հարց: Վրիստոնէութիւնն նշանն ի՞նչ է:

Պատ: Վրիստոնէութիւնն արտաքին նշանն՝
երեսն խաչակնքելն է. իսկ ներքինն նշանն
նրն՝ եղբայրսիրութիւնն է:

Հարց: Ի՞նչպէս երեսըդ կը խաչակնքես:

Պատ: Ընտանիքս կը խաչակնքեմ. ձեռքս
ձախառս կը դնեմ՝ || յանուն հօր || ըսե
լով. դօստիս վրա կը դնեմ՝ || և որդւոյ ||

ըսելով . կուրծքիս ձախ դին կը դնեմ՝
 || և հոգւոյն || ըսելով . աջ դին կը դնեմ՝
 || սբյ || ըսելով . սրախ վրա կը դնեմ՝
 || ամէն || ըսելով . ահա այս է խաչակնքել
 լու կերպը : Աւրեմն մեծ ամօթ է այն
 քրիստոնէին , որ երեսը խաչակնքելու
 կերպը շիտակ չը գիտէր :

Հարց : Քրիստոնէայն քանի՞ բանով
 արքայութե արժանի կըլլայ :

Պատ : Ըյս չորս բանովը . որք են , հա
 ւասար , յոյս , սէր , և բարեգործութի :

Հարց : Ը՞նչ է :

Պատ : Ը՞նչ արարիչ է երկնի և երկրի ,
 երևելեաց և աներևութից :

Հարց : Ը՞նչ քանի է :

Պատ : Ը՞նչ մեկ է , էութիւն , բնութիւն , և
 զօրութիւն . բայց երեք անձն է . հայր ,
 որդի , և սբ հոգի . հայր անակիզքն , որ
 դի ծնունդ ՚ի հօրէ , և սբ հոգին բըղ
 խումն մշանջենաւոր առ ՚ի հօրէ , և այս
 երեք անձինքս իրարմէ մեծ ու պղաթիկ
 չեն . աւելի և պակաս չեն . սոյլ հաւասար
 մեկ տէրութի և մեկ իշխանութի ունին :

Հարց : Ը՞նչ ո՞ր տեղ է :

Պատ : Ընդ յամ տեղիս է :

Հարց : Ընդ ինչու համար՝ ॥ Հայր մեր
որ յերկինս ॥ կրսենք :

Պատ : Ըստ որում արքայուհին յերկինս
է, և նոյ սքանչելիքը հոն աւելի կերևնայ .
և հրեշտակք և սբց հոգիք հոն են . այն
պատճառաւը՝ նո՛ւ յերկինս է կրսենք :

Հարց : Քրիստոնէական հաւատքը քա
նի՞ մասունք կամ աստիճան ունի :

Պատ : Տասներկու աստիճան ունի . որ
սբ առաքեալները յերուսաղէմ քաղաքը
սիոն վերնատունը՝ հաւատամքին մէջը
յայտնի ըրին :

Հարց : Սէկ մեկ ըսէ՛ որ լսեմ :

Պատ : Ընդ ինչու աստիճանը սբ պետրոս
առաքելն ասաց . ॥ Հաւամքի մի նո՛ւ հայր
ամենակալ յարարիչն երկնի և երկրի ॥ :

Երկրորդ աստիճանը սբ յոհաննէս աւ
ւետարանիչն ասաց . ॥ Նա՛նք մի նո՛ւ յս քս
որդին նոյ ॥ :

Երրորդ աստիճանը յոհաննէս աւե
տարանչի եղբայր՝ սբ յակոբոս առա
քեալն ասաց . ॥ Սարմնացաւ, մարդա
ցաւ, ծնաւ կատարելագէս ՚ի մարիամայ

սրբոյ կուսէն հոգւոյն սրբով ॥ :

Չորրորդ աստիճանը սբ անդրէաս
առաքեալն ասաց . ॥ Չարչարեալ, խա-
չեալ, թաղեալ ॥ :

Հինգերորդ աստիճանը սբ թովմաս
առաքեալն ասաց . ॥ Եւ ՚ի դժոխս ॥ :

Վեցերորդ աստիճանը սբ բարթոլղի
մէոս առաքեալն մեր ասաց . ॥ Յերրորդ
աւուր յարուցեալ ՚ի մեռելոց ॥ :

Եօթներորդ աստիճանը սբ փիլիպ-
պոս առաքեալն ասաց . ॥ Համբարձաւ
յերկինս և նստաւ ընդ-աջմէ հօր ॥ :

Ութերորդ աստիճանը սբ մատթէոս
աւետարանիչն ասաց . ॥ Վարոց է դա-
տել զկենդանիս և զմեռեալս ॥ :

Իններորդ աստիճանը սբ յակոբոս ալ
փեան ասաց . ॥ Հաւամբ ՚ի հոգին սբ ॥ :

Տասներորդ աստիճանը սուրբ սիմօն
կանանացին ասաց . ॥ Ի սբ կաթուղիկէ
էկեղեցի ॥ :

Տասն և մէկերորդ աստիճանը սբ թա-
դէոս առաքեալն մեր ասաց . ॥ Ի թո-
ղութիւն մեղաց ॥ :

Տասներկու երորդ աստիճանը սբ մա-
տաթիա առաքեալն ասաց . ॥ Ի յարու-

մարմնոց, ՚ի դատաստանն յաւխտենից ॥ :

Հարց : Ակեղեցին քանի՞ կերպ է :

Պատ : Արեք կերպ է . Առաջինն է Յաղթօղ եկեղեցի . որ վերին եէմ, կամ արքայութի երկնից ալ կանուանի . քանզի հոն են սբերը, որք յաղթօղ գլանըվեցան այս աշխարքիս վրա :

Արևորդն՝ Օրնուորեւ կամ բանտ կան եկեղեցի . որ բարոյական մարմին քի ալ կանուանի . և այս է Տիս մէջ գլանը ված բովանդակ ճշմարիտ քրիստոնէից ժողովը . որոյ ճշմարիտ գլուխն է ինքն քս : Աւզնուորեալ անոր համար կըսվի . վնզի միշտ պատերազմ պիտի ընենք մեր հոգւոյն թշնամեացը հետ . որ այս երեքս են, մարմին, աշխարհ, և սատանայ :

Արևորդն՝ Ախթական եկեղեցի . որ տաճար նոյ ալ կանուանի . ուր տեղ քրիստոնէայքս նոյ պաշտօն կը մատուցանեմք :

Հարց : Սուրբ եկեղեցւոյ խորհուրդը քանի՞ է :

Պատ : Աթոն է . մկրտուի, դրոշմ, հաղորդութի, ասպաշխարութի, վերջին օծումն, կարգ և պսակ :

Հարց: Երկնաց պատուիրանքը քանի՞ է:
 Պատ: Հինգ է. Մաթթևոսն՝ սբ կանոնաց սահմանած օրերը պահք պահել:

Երկրորդն՝ տերուների օրերը, ինչպէս է կիրակին, և շաբթու մէջ պատահած կիրակի օրերը՝ մարմնաւոր գործքերէ ետ կենալ, ու հոգեւոր գործոց պարապիլ՝ որպի է կանուխ ժամ գնալ, սբ պատարագ տեսնալ, քարոզ լսել:

Երրորդն՝ երկար ժամանակ առանց խոստովանութեան չի մնալ:

Չորրորդն՝ սբ հաղորդութի առնուլը չի ուշացունել. գինէ ծնունդին, զատկին, և սբ անծածնին, քի սբ մարմնոց և արեանը խոստովանութբ հաղորդել:

Հինգերորդն՝ տարեկան վաստակին տասանորդը հոգեւոր բաներու համար յօժարութեամբ տալ:

Հարց: Քանի՞ օրէնք տուաւ անծ մովսէս մարգարէի ձեռօք:

Պատ: Տասն օրէնք տուաւ. Մաթթևոսն ես եմ քո սբ անծըրդ. չըլլա որ ուրիշին անծ ըսես. Երկրորդն՝ կուռք մի՛ շիներ, և անոնք մի՛ պաշտեր. Երրորդն՝

իմ անուանս սնտաի բաներու վրայ մի՛
 դներ, որ է ասել, սուտ տեղը երդում
 մի՛ ըներ: Չորրորդն՝ շաբաթ օրերը սբ
 պահէ, որ սբ առաքեալները շաբաթը ՚ի
 կիրակի փոխեցին, ը որում քս ՚ի կիրակի
 օր յարեալ ՚ի մեռելոց: Հինգերորդն՝
 հայրըդ մայրըդ պատուէ: Ա եցերդն՝
 մի՛ սպանաներ: Աթոներդն՝ մի՛ շնար:
 Աթերորդն՝ մի՛ գողանար: Իններորդն՝
 մի՛ սուտ վկայեր: Տասներորդն՝ օտարին
 կնոջը կամ տանը կամ անոր ունեցած
 բաներուն ամենեկին մի՛ ցանկար:

Հարց: Ը պաշխարանքը քանի՞ բանով
 կը կատարի:

Պատ: Արեք բանով. այսինքն աղօ
 թիւք, պահօք, և ողորմութեամբ:

Հարց: Ը զօթքն ի՞նչ է:

Պատ: Ը զօթքն է պտուղ սրտի և բերա
 նոց. որով մեր կարօտուիլը այ կը յայտ
 նեմք, ու անկէց ողորմուի կը խնդրեմք:

Հարց: Պահքը ի՞նչ է:

Պատ: Պահքն է՝ միսէ, իւղէ, ձուկէ,
 և ասոնց նման կերակուրներէ հեռու կէ
 նալ՝ այն օրերը, որ սբ եկղջին կանոններէ:

Սակայն այս արտաքին պահք է , ասող
 հետ ՚ի միասին ներքին պահք ալ պէտք
 է , որ է օրինաց պահպանութիւնը :

Հարց : Ողորմութիւնն ի՞նչ է :

Պատ : Ողորմութիւն՝ կարօտելոց օգ-
 նութի ընել է . և այս է երկու կերպ ,
 մարմնաւոր և հոգևոր :

Հարց : Ս՝արմնաւոր ողորմութիւնը քանի՞ է :

Պատ : Եօթն է . իմ՝ քաղցածը կերակ-
 րել . ծարաւին ջուր տալ . մերկը հագ-
 վեցընել . օտարը տուն տանիլ . հիւան-
 դին տես երթալ . բանտարկեալը եր-
 թալ մխիթարել . տէր չունեցող մեռե-
 լը թաղել :

Հարց : Հոգևոր ողորմութիւնը քանի՞ է :

Պատ : Եօթն է . իմ՝ երկմիտ մարդը խը-
 րատել . տգէտին բարի բան սորվեցընել .
 մեղքէն ետ չի կեցողը չեխել . արտումը
 մխիթարել . յանցաւորին ներել . նեղուե-
 համբերել . և ամմէնուն համար աղօթել .
 թէ կենդանեաց և թէ ննջեցելոց :

Հարց : Հոգևոյն սքշ պարգևը քանի՞ է :

Պատ : Եօթն է . իմաստութի , հան-
 ճար , խորհուրդ , զօրութի , գիտութի ,

Պատ : Չորս բան է , յի՛ անհրաժարելի
մահ , ահեղ դատաստան , ահագին դժ
ժոխք , և անձառելի արքայութի՛ :

ՍՒՆՍՆ . Բ :

Քրիստոնեական գործք :

Լ Տա՛ Քրիստոնեութե՛ն առաջին
համարը սորվեցար . որ թէ մեկը
քեզի հարցունէ , Եղբայր իմ սիրելի ,
Ի՞նչ զինչ ես : Պատասխանի՛ տաս ,
Փառք այ՛ քրիստոնեայ եմ :

Բ. յս խոսքով անունդ յայտնեցիր .
բայց տեսնանք՝ արդե՞ք գործքդ ալ ա
նունիդ յարմար է . վն՛ զի սոսի անունով
քրիստոնեայն փրկութե՛ն չի հասնիր :

Ի՛նչ ընեմ՝ այ՛ դրախտին ծառ տնուա
նիլդ , որ պառւղ չունիս . կամ երկնից
աստղ անուանիլդ՝ որ լոյս չունիս :

Հոգեւոր ծառ կամ աստղ կանուա
նիս , վասն զի քրիստոնեայ ես , բայց
պէտք է որ բարեգործուե՛ պառւղ կամ
լոյս ալ ունենաս : Ք. անզի անպառւղ

Ծառը կը կըտորըվի . * Ատրեա՛ զգա , ընդ-
էր և զերկիրդ խափանէ . || զուհի . ԺԴ . 7 :

Ընկոյս աստղը՝ երկինքէն վար կիյ-
նա . * Ըստեղք յերկնից ԹօԹափեսցին .
|| Զարհի . ԺԴ . 25 :

Քանզի քրիստոնէական վարդապե-
տուիը միայն գիտնալով յարքայուի չեը
Թըցվիր . այլ պէտք է որ բարեգործուի
ալ ունենալք . լսէ՛ ինչ կըսէ յակոբոս
առաքեալը . * Հաւատք առանց գործոց
մեռեալ են . || Եսի . Կաթ . Թ . 26 :

Հապա սիրելի որդի՛ ջանք ըրէ անու-
նիդ յարմար բարեգործուի ունենալ .
որ փրկուԹէ հասնիս , և երկնից ար-
քայուԹեան արժանի լինիս :

ԵղբայրսիրուԹիւն :

Քրիստոնէական գործոց մեծ և ա-
ռաջինը եղբայրսիրուիւն է . քրիստոնէայ
մը եթէ եղբայրսիրուի չունենայ , ու-
րիշ բարեգործուիւներ ալ չի կարեր ու-
նենալ . ինչպէս աղայ մը եթէ քերական
չի սորվի , հեգերէն կամ սաղմոս չի կա-
րեր սորվիլ :

Յօհաննէս աւեապրանիչը միշտ սեր

կը քարոզէր . օր մը աշակերտները ըսին
 իրէն , հայր սբ՝ միշտ սէր կը քարոզես .
 ուրիշ առաքիլսուծէ վրա բան մը չես
 խօսիր :

Պատասխան տլվաւ անոնց , ու ըսաւ .
 սիրելի որդեակք իմ՝ սէրը պատուիրան
 Թն է , սէր եղած տեղը՝ ամմէն բարե-
 գործուծիւն կատարեալ է :

Եւ իրաւ է այս . վն զի քրիստոնեայ մը
 էթէ եղբայրը սիրէ , անոր մնաս չի տար .
 անունը չի բամբասեր . սիրաը չի կոտորեր .
 ապրանքը չի գողնար , կամ չի յափշտա-
 կեր . անոր յանցանքին կը ներէ . մեկ
 խօսքով՝ անոր ցաւին ցաւակից կը լայ ,
 և ուրախուծէր ուրախակից : Տեսա՞ր
 եղբայրսիրուծիր ինչպէս ուրիշ առա-
 քիլսուծէց ալ պատճառ եղաւ :

Իսոր հակառակ՝ մեկ քրիստոնեայ մը
 էթէ եղբայրսիրուծի չունենայ նէ , շատ
 կերպ չարուծի և մնաս կը գործէ ընդ
 դէմ եղբօրն . վարկումը (յի իխթիպարը)
 կը կոտորէ վաճառականին քովը . առու-
 տուրը կաւրէ՝ ապրանքը վար զարնե-
 լով . կը գողանայ ինչքը . անիրաւ զրպար
 տուծիւն կընէ վրան . բռնաւորաց կը



մատնէ • ասոնք ամմէննալ եղբայրատե
ցութենէ կը յառաջանան :

Ընոր համար յօհաննէս աւետարա
նիչը կըսէ թէ , եղբայրասէր չեղողը՝
ածասէր ալ չէ • * Եթէ որ ասիցէ՝ եթէ
սիրեմ զած , և զեղբայր իւր ատիցէ ,
սուտ է : որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր
տեսանէ , զած զոր ոչն ետես՝ զիանդ
կարիցէ սիրել • || I ԵՅ • Գ • 20 :

Երբ կը տեսնայ ան որ դու եղբօրդ
հետ ատելութի ունիս , ու ան սիրութե
նշաններ ցոյց կուտաս , քո սէրդ չի ըն
դուներ : || Ը զի ինքն քն ան սբ աւե
տարանին մէջը կը հրամայէ • * Եթէ մա
տուցանես զպատարագ քո ՚ի վերայ սե
ղանոյ , և անդ յիշեսցես՝ եթէ եղբայր
քո ունիցի ինչ խեթ զքէն , թող զպա
տարագն քո առաջի սեղանոյն • և երթ
հախ հաշտեաց ընդ եղբօր քում , և ա
պա՛ եկեալ մատուցի՛ր զպատարագն քո :
|| Ես • Է • 23 :

Ըյս բանս միայն քահանայից համար
ըսված մի՛ իմանար , այլ ան քրիստոնէից
համար • վն զի ժողովուրդն ալ իւր քրիս
տոնէութիւն վայելուչ պատարագ ունի •

պատարագ է աղօթք ընելը • պատարագ է
 պահք պահելը • պատարագ է ողորմութի
 տալը • և ինչ բարի բան որ այ սիրոյն
 համար կընես, այն ամ պատարագ կամ
 նուէր այ կը կոչվի : * Պատարագ այ հո
 գի խոնարհ • || սաղ. Ժ. 19 :

|| Էրեմն աղօթք ըսկսելու ժամանակդ՝
 միտքդ ինկաւ որ՝ այս ինչ եղբօրդ կամ
 դրացւոյդ՝ կամ ազգականիդ՝ կամ օտար
 մեկի մը պատճառ ես տրվեր՝ որ քեզի
 խռովեր է, պէտք է որ աղօթքդ թո
 ղուս, երթաս անոր հետ հաշտուիս •
 յետոյ գաս աղօթքդ ընես : Եւսպէս ի
 մացիր նաև ուրիշ բարեգործութիւն
 ներու համար • ապա ամմէնէն աւելի
 ջանք ըրէ որ եղբայրասէր լինիս :

Խոնարհութիւն :

Եղբայրսիրութե՛ ետև՝ խոնարհութիւն
 է քրիստոնէական գործ • ինչպէս սատա
 նայն հպարտութիւն նշան կը գնէ իր ծա
 ուաներուն վրա, որով կը ճանաչվին թէ
 սատանայի ծառայ են • ասոր պէս ալ քս
 նշան կը գնէ խոնարհութիւն՝ քրիստոնէից
 վրա • որ անով կը ճանաչվին թէ քի՛ ծնյ են :

Մանց խոնարհութե գործը ված առաքինութիւները խախուտ են . վն զի խոնարհութիւր ամեն առաքինութեց հիմն և արմատն է . հիմն չունեցող շինուածը՝ հաստատուն չըլլար . արմատ չունեցող ծառը՝ չի բարձրանար :

Խոնարհութիւն է՝ որ զմեզ ՚ի վեր առած կը տանի . քանզի երբ կը տեսանէ ձեռք մեր սրտին բեկումը և խոնարհութիւնը՝ կը բարձրացուցանէ զմեզ . ասոր համար կը սէ քս . * Ար խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի . || շուհի . ԺԸ . 14 :

Եւ դաւիթ կըսէ . ձեռք * Օ խոնարհս հողուով կեցուցանէ . || սաղ . ԼԴ . 19 :

Մյա որ կը փափաղի յաւիտենական կենաց հասանիլ , եղբայրսիրութե հետ խոնարհութի ալ պիտի ունենայ :

Ներողութիւն :

Պէտք է քրիստոնէին ներող ըլլալ յանցանաց ընկերին , ինչպէս գլուխն մեր քս եղաւ . որ երբ ՚ի վն խաչին էր՝ խաչահանուաց համար կաղաչէր առ հայր՝ ասելով , * Հայր՝ թող սոցա՝ զի ոչ գիտեն զինչ գործեն , || շուհի . իԴ . 34 :

Եւ հիմա ևս մեր մեղացը համար թողու-
թի կը խնդրէ, ինչպէս պողոս առա-
քեալը կը գրէ. * Քս յս՝ որ մեռանն,
մանաւանդ թէ յարուցեալ իսկ է. և է
ընդաջմէ այ, որև բարեխօս իսկ է վն
մեր. || հոգ. ք. 34:

Վ. յսպէս քի հարազատ ծառայն նբ
ըստեփաննոս ալ կաղաղակէր առ անձ վն
քարկոծողացն. * Տր, մի՛ համարիր դո-
ցա զայս մեղս. || Ժործ. է. 59:

Եւ այնքան հարկաւոր է քրիստոնէին
այս ներողութիւնը, մինչ զի առանց ասոր
չի կրնար ներողութի գտնալ աստուծմէ.
քանզի ասէ քս. * Վպա թէ ոչ թո-
ղուցուք մարդկան զյանցանս նոցա, և
ոչ հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս
ձեր. || մատ. ք. 15:

Եւ այս խօսքով իբրու թէ ան մեղի
հետ դաշն և պայման կը դնէ, (յն խավը
կընէ). Եթէ ներեմք մեր ընկերին յան-
ցանքը՝ որ մեղի դեմ ըրեր է, ան ալ
մեր յանցանքը կը ներէ. և եթէ չի նե-
րեմք, ինքն ալ չի ներէր. Աւստի պէտք
է որ փոփոխակի ներողամիտ լինինք
միմեանց:

Համբերութիւն :

Համբերութե՛ն համար պօղոս առաքեալը կրսէ . * Պիտոյ է ձեզ համբերութի՛ն . զի զկամս նոյ արարեալ հասնիք աւետեացն . || Էփ. Ժ . 36 :

Սն զի ինչպէս սբերը նեղուէ համբերելով աւետեաց հասին . ասոր պէս մենք ալ եթէ համբերեմք՝ նոյն աւետեացը կըրնամք հասանիլ :

Հողագործը շատ կերպ նեղութե՛ն կը համբերէ անցաւոր բարեաց համար . ձմերան ցուրտը և ամառվան տաքը առանց դժգոհութե՛ն կը տանի , որ երկրին բերքը վայելէ . ինչպէս յակոբ տնեղբայրն կրսէ . * Մհա մշակ երկայ նամտեալ ըստասէ պատուական պտղոյն երկրի . || յառ . Գաթ . Է . 7 :

Մպա որչափ առաւել պէտք է մեզնի անանց և յաւիտենական բարեաց համար՝ ժամանակաւոր նեղութե՛ն և վշտաց աշխարհիս համբերել . միշտ անմոռաց մտքերնուս մէջը ունենալով քի այն խօսքը , թէ * Ար համբերեացն՝ ի սպառ , նա կեցցէ՛ . || Գաթ . Իդ . 13 :

Ուրեմն քրիստոնէի յատուկ եղած այն
 չորս առաքինութիւները՝ պէտք է որ ամեն
 քրիստոնեայ ունենայ . վն զի ասոնցմով
 կը շինվի բարոյական խաչ . որոյ վերին
 ծայրն է սէր . պատուանդան՝ խոնար
 հուծի . ձախ թև՝ ներողութի . և աջ թև՝
 համբերութի . և այն ժամանակը կը կա
 տարի քի խօսքը՝ որ կըսէ . * Աթէ որ
 կամի գալ զկնի իմ , ուրասցի զանձն
 իւր , և բարձցէ զխաչ իւր՝ և եկեսցէ
 զկնի իմ . ॥ ճառի . Ը . 34 :

Հնազանդութիւն :

Քրիստոնէական հնազանդութիւնը այն
 քան պիտանի և օգտակար է որ , մինչ զի
 քն արն մեր՝ իւր օրինակովը մեզի սոր
 վեցընել ուղեց . Ան զի ինքն հնազանդ
 էր ոչ միայն իւր յաւիտենական հօրը ,
 այլ և հնազանդ էր մօր իւրոյ ամենաօր
 կուսին , նաև պաշտպանին իւրոյ սրբն
 յովսեփայ . * Աջ Ը նս , և գնաց ՚ի նազա
 րէթ . և էր նց՝ հնազանդ . ॥ շառի . Ը . 50 :

Տէս միանգամ , եթէ մեր արը և անը
 յն քն կը հնազանդի . սպա քանի՞ առա
 ւել մենք պիտի հնազանդ իմք . նախ՝ այ

հրամանին • երկրորդ՝ սբ եկեղեցւոյ
կանոնաց • երրորդ՝ վեճակի առաջնորդին
և յառուկ խոստովանահօրն • չորրորդ՝
ծնողաց և վարպետաց :

Սէկ խօսքով, ամմէն պղտիկ իւր մե-
ծին պէտք է հնազանդիլ • ինչպէս առա-
քեալը կը պատուիրէ ասելով • * Վնայն
անձն որ ընդ իշխանութբ է , ՚ի հնա-
զանդութե կացցէ • ॥ հոսմ . ԺԴ . 1 :

Ծնօղք :

Մարք և մարք թէ կուզէն զաւակ-
նին իրէնց հնազանդ ըլլան , պէտք է
որ՝ իրէնք ալ այ օրինաց և սբ եկեղեցւոյ
կանոնաց հնազանդ գըտնըվին :

Վդամ նախահայրը դրախտին մէջ
որքան ժամանակ այ հրամանին հնա-
զանդ մնաց , ամմէն կենդանիները իրէն
հնազանդ էին • և երբ ապատամբեցաւ
աստուծմէ՝ կենդանիներն ալ իրմէ ա-
պրատամբեցան :

Վպա ջանք ըրէք օրհնեալ ծնօղք , որ
դուք նախ հնազանդութի ունենաք այ՝
և սբ եկեղեցւոյ նր • և լինիք հեղ , խո-
նարհ , պարկեշտ , աղօթասէր , ողորմած ,

պահէցող , և ամ առաքինութիւն զար-
դարեալ . ուն զի ձեր զաւակներն ալ ձե-
զի նմանին , և ձեզ հնազանդ լինին :
Վրած է , * Մենայն ծառ բարի՝ պը
տուղ բարի առնէ . || Տառ . Է . 17 :

Վուր ուլ ծնողք՝ բարի ծառ կըլլաք ,
երբ մտքերնիդ ու սրտերնիդ մաքուր
պահէք , որ չար բան չի խորհի . բերան-
նիդ մաքուր պահէք , որ հայհոյութի ,
բամբասանք , և առասպել խօսք չի խօ-
սի . ահանջնիդ մաքուր պահէք , որ չար
խօսքերու մտիկ չընէ . աչքերնիդ մա-
քուր պահէք , որ գեշի չի նայի , յորմէ
մեղք կը ծնանի :

Սէ՛քն արն մեր ինչ կըսէ . * Եթէ
ակն քո աջ գայթակղէցուցանէ զքեզ ,
խլեա՛ զնա՛ և ընկեա՛ ՚ի քէն . զի լաւ է քեզ
եթէ մի յանդամոց քոց կորիցէ , և մի՛
ամ մարմինդ քո անկանիցի ՚ի գեհեն .
|| Տառ . Է . 29 : Եւսպէս իմացիր և ու-
րիշ զգայարանացդ համար :

Վրիստոնեայն՝ ամմէն զգայարանօք ը
մաքուր պիտի ըլլայ ամմէն ժամանակ և
ամմէն տեղ . մանաւանդ իրէն զաւակաց
և ընտանեաց առջևը :

Ս այն ծնողացը՝ որ իրենք չար են •
 հազար վայ անոնց , որ իրենց զաւակաց
 քովն ալ չարուի կը գործեն • զոր օրինակ
 փարայով թուղթ , թավլու , կամ այլ
 կերպ խաղ կը խաղան , որ խումարպա
 զութի ըսել է • կամ չափէն աւելի գինի
 խմելով կը գինովնան • և կերպ կերպ
 հայհոյութիւներ կընեն • և կամ այր և
 կին իրարու հետ կը կրուլին , և մեկը
 մեկ կատեն • ասոնց խեղճ զաւակներն
 ալ՝ իրենց ծնողաց չար վարքը տեսնալով
 կը սորվին , և իրենք ալ չար կըլլան • վն
 զի ինչպէս բարի ծառը՝ բարի պտուղ
 կը բերէ , այսպէս չար ծառը՝ չար պլ
 տուղ կը բերէ :

Լ աւ իմացէք , որ զաւակ չունեցող
 մարդը եթէ գէշ ըլլայնէ , ինքը մինակ
 կը կորնչի • բայց զաւակաց տէր եղողը
 եթէ գէշ ըլլայ , իրէն հետ իր զաւակ
 ներն ալ կը կորսնցընէ : **Ս** զի հայրը
 ու մայրը իրենց զաւակացը հայելին են •
 զաւակները ինչ որ տեսնան ծնողացը
 վրա , իրենք ալ անիկա կը գործեն :

Լ պա գուք բարի ծնողք՝ խնայեցէք
 ձեզի ալ՝ ու ձեր զաւակացն ալ • բարի
 օրինակ եղէք անոնց :

Քանի որ չարն ու բարին չեն սորված,
 Չանք ըրէք բարին սորվը ցընել . անոնց
 լեզուն բացվածին պէս , || յանուն Հօր
 և Արդւոյ և Հոգւոյն սբայ ամէն || ըսել
 սորվը ցուցէք . և ձեռքերնին բռնելով
 երեսնին խաչակընքել տրվէք : () աւա
 կաց քովը հայերէն խօսեցէք , որ նախ և
 յառաջ իրէնց հայրէնի լեզուն սորվին :

Շատ աղէկ է որ՝ հայազգի քրիստոն
 էայք իրէնց մէջը միշտ հայերէն խօսին .
 վն զի այլազգերէն խօսելով , շատ տեղ
 հայերէն լեզուն կորուսերէն . և եկե
 ղեցւոյ մէջ իբրև օտարազգի կը կանգ
 նին . կարգացմունքին միայն ձայնը կը
 լսեն , ամենևին բան չեն հասկընար :

Եւրա դուք որ հայերէն գիտէք , Չանք
 ըրէք որ չիմոռնաք . և ձեր զաւակացն
 ալ սորվը ցընէք :

Ա՛յլ ծնօղք , զաւակնիդ երբ որ հինգ
 կամ վեց տարեկան կըլլայ , անպատճառ
 կարդալ տրվէք , որ իրէնց հոգինին ու
 մարմիննին շահելու համար կարդալ գը
 ղել սորվին :

Կատարեալ ժամանակը չի հասած՝ ար
 հեստի մի՛ տաք , վն զի անօգուտ է , չեն

կարեր սորվիլ : Շատ օգտակար է անոնց՝ տղայութե ժամանակը մարդավարութիւն ու կարգալ գրել սորվիլ . որ գլխաւոր և պիտվական արհեստ է :

Երանի էր թէ , քերականութի կամ ուրիշ գիտութի ալ սորվըցընել տայիք ձեր զաւակացը . ու այնպէս քաղաքական արհեստի կամ առուտուրի մէջ խօթելիք . որ մտքերնին բաց կըլլար , և քիչ ժամանակի մէջ շատ բան կըրնային սորվիլ :

Եւս ըսածներըս պարտք է ձեզի օրհնեալ ծնողք , ջանք ըրէք այսպէս ընել , որ պարտականութենէ ազատիք :

Զաւակունք :

Մաշի համարս ձեզի՝ սողոմնն իմաստունին ըսածը թող ըլլայ . * Վոր որ դեակ խրատու հօր քո , և մի՛ մերժեր գօրէնս մօր քո . զի պսակ շնորհաց ընկալցի գլուխ քո . և մանեակ ոսկի՛ի պարանոցի քում . || առաջ . Թ . 8 :

Սպա օրհնել զաւակունք ջանք ըրէք՝ որ ձեր ծնողացը միշտ հնազանդ ըլլաք . անոնց խօսքէն դուրս չելլաք . անոնցմէ չի գատիլիք . առանց ծնողաց հարցունելու

բանմը չի գործէք . մինակ տեղ չերթաք :
 Աթէ մանչ զաւակ ես նէ , հօրըդ հետ
 դըռնէն դուրս ելիր , եթէ ժամ երթա-
 լու ես և եթէ խանութ . գէշ տղայոց
 հետ տեսութի մի՛ ընէր . քովերնին մի՛
 հանդիպիր . վրանին մի՛ նայիր :

Աթէ աղջիկ զաւակ ես նէ , մօրմէդ մի՛
 զատվիր . թէ ժամ թէ բաղնիք , թէ ուր
 որ լինի՝ մօրըդ հետ գնա . առանց մօ-
 ըրդ՝ տանը դըռնէն դուրս մի՛ ելանէր .
 դրոցի աղջկանց հետ շատ տեսութի մի՛
 ընէր . մանչերուն հետ ամենևին տե-
 սութի մի՛ ընէր . խաղալիք (օյունճախ)
 բաներու մի՛ հետևիր . քեզի շատ զարդ
 (տիւզէն) տալու մի՛ նայիր . քո զարդը
 ճնողացդ հնազանդ ըլլալն է , և քո պար-
 կէշտութիւնն է : Աթէ այս ըսածներըս
 ընէք , նոյ շնորհքը ձեր վրա կըլլայ :

Պարկէշտութիւն :

Պարկէշտութիւնը առաւել կանանց պէտք
 է , բայց արքալ թող մտիկ ընեն . վս զի
 ինչպէս պարկէշտութիւնը , նմանապէս և ան-
 պարկէշտութիւնը՝ երկուքին ալ ընկերուի է
 . Աթէ այլը պարկէշտ է՝ փառք է կնոջն ,

և եթէ անպարկեշտ է՝ անարգանք է․ ասոր
պէս ալ եթէ կինն պարկեշտ է՝ փառք է
առն, և թէ անպարկեշտ է՝ անարգանք է։

Ըրդ՝ օրհնեալ կանայք՝ եթէ ձեր հոգ
ւոյ փրկութիւն կուզէք նէ, լաւ մտիկ
ըրէք ինչ պիտի խօսիմ ձեզի։ Վրիս
տոնէի վայելուչ պարկեշտութիւն պէտք է՝
որ ձեր կերպարանքին ու հանդերձին վրա
պայծառ փայլի․ ապա չըլինի՝ որ նոյն ըս-
տեղծած ձեր երեսին չի հաւնելով՝ կեր-
պարանքնիդ փոխէք ուրիշ հնարքներով․
իմացիք որ այնպէս ընողներուն՝ դա-
տաստանի օրը քս պիտի ըսէ, || ոչ գի-
տեմ զձեզ ||․ ապա կուզէք որ գիտնայ
ու ճանաչէ, նոյն ստեղծած կերպարանքը
հերիք համարեցէք։

Վմանապէս ջանք ըրէք, որ հանդերձ
նիդ ալ պարկեշտ ըլլայ․ վրանիդ գը-
լուխնիդ կանանչ կամ կանանչի մօտ գու-
նով բան չի գտնուի․ նորաձև հանդերձ
և սովորուէ՛ դուրս Ֆերաճէ մի՛ հագնիք․
գլուխ կապելնիդ ալ պարկեշտ ըլլայ։

Վուրս ելած ժամանակնիդ, թէ եկե-
ղեցի, թէ բաղնիք, և թէ այլ տեղ երթա-
լու լինիք, քալվածքնիդ ու շարժմունք

նիդ կարգաւ և պարկեշտութիւն ըլլայ ։
 Այնպէս զորոք մէջ ուրիշի հետ մի' խօսիք , բամբասանք մի' ընէք . միայն թէ՛ ուղիղ դիտաւորութիւն աղօթեցէք ։

Բարոյնիք երթաք նէ , ոսկեղէն կամ էլմասեղէն զարդ չի գրանցվի վրանիդ . վն զի այդ ձեր զարդարվելովը՝ բովանդակ ազգերնիս կը բամբասավի : Հասկը ցէք ինչ կըսեմ . մենք հարկատու ռայե եմք , պէ՛տք է որ ռայեի յարմար հագուստ ունենամք ։

Եւ ալ կը պատուիրեմ ձեզի , հետերնիդ եփած կերակուր , գինի , ռախի , կամ կերպ կերպ սիրտ ուղեւը հազուադիւտ բաներ չի տանիք ։

Սն զի աղքատն որ չունի , ձեր ուտելը և խմելը կը տեսնայ՝ սիրտը կուզէ . գիտէք որ՝ ասկից հոգեկորուստ բան կը ծնանի . դուք ալ քիչ մը ուտեմք խմեմք ըսելովնիդ՝ մարդասպան կըլլաք ։

Աւրեմն բարոյնիք երթաք նէ , մինակ հաց ու լիմօն այն օրը ձեզի բաւական է . երբ որ տուն դառնաք , այ պարգևը հոն վայելեցէք չափով ։

Յիրաւի՝ կանանց այլ ևս շատ բան կայ

խօսելու , սակայն կը թողում որ իրենց
խոստովանահայր քահանայքը խօսին .
միայն թէ այս մեկը շատ հարկաւոր ըլլա
լուն պատճառաւ , հարկ է խօսիլ :

Ոմանք անմիտ կանայք՝ երբ որ ցաւի
մը կը պատահին , կամ կորուստ մը կուենե
նան , իսկոյն կախարդի , գարի ձգողի ,
և այլ այսպիսի խաբեբաներու դուռը
կը վազեն . ասով՝ այ՛ դուռը կը թո
ղուն , սատանայի դուռը կը չալեն :

Ըն խաբեբաները՝ եթէ ձեռքերնուն
բան կուգայ , հասպա ինչու քու մեկ
քանի փարայիդ կարօտ են մնացեր .
դուն ալ անմտութե կերթաս անոնց կը
խաբւիս . բժշկութի կը փրնարուեսնէ՝
քու ստեղծողէդ խնդրէ . ճշմարիտ քրիս
տոնէից բժիշկը՝ քս է . դեղ՝ սք ա
ւետարան , կամ սք կենաց փայտ , և
կամ սքց մասունքներն են :

Ըսոնք ըսելովս՝ չեմ ըսեր թէ վարպետ
բժիշկ բերել մի՛ տար , կամ դեղ մի՛
առներ . վս զի օրինաւոր բժիշկներուն
չնորհք , և դեղերուն զօրութի տրվողը՝
ի՛նչ է . միայն թէ խօսք ըս անոնց է , որ
սք եկեղեցին կարհամարհեն , և սատա

նայական ըմբռնութիւն կը հետեւին , դու
որ բարեպաշտ քրիստոնէայ ես , այն
պիսի խաբէական գործքերէն բոլոր
վին հեռի կեցիր :

Ի այց որովհետեւ մարդ ես , հիւան
դու թի՛ կըրնայ պատահիլ քեզի . այն
ժամանակը յառաջ քահանայն կանչէ ,
կատարեալ խոստովանանք եղի՛ր , հաղորդ
առ . ի՛նչ գիտես՝ գուցէ հիւանդու ի՛դ
մեղաց համար է . երբ որ մեղքէն աղա
տիս՝ հիւանդու ի՛դ ալ վրայէդ կերթայ :

Հոգևոր պաշտօնդ հոգալէդ ետեւ ,
բժիշկի ալ ցոյց տուր քեզի . միայն թէ
կախարդութի՛ մի՛ հանարպցընէր քովդ ,
ու կախարդութե՛ մօտ բաներ մի՛ ընէր .
Ինչպէս՝ աղբիւսի (սփ չէփլիւկի)՝ կամ
ծովու վրա աւետարան կարդալ առաւ ,
շէրպէթ թափել , նուսխայ պահել , և
այլ այսպիսի խենդու մէնդ բաներ ընել .
վս զի այսպէս բաները՝ սբ հաւատոյ և
եկեղեցոյ ընդդէմ է :

Ս երջապէս ամմէն մարդ թէ այր և
թէ կին , թէ մեծ և թէ պզտիկ , այն
պէս մտաց մէջը թող դնէ , ինչպէս
ստոյգն ալ այս է , սոյ ամենասբ աչքը՝

միշտ իմ վրաս է՝ ու զիս կը տեսնայ • ա-
յա ջանք ընեմ որ նոյ առջևը պահասու-
թիւն մը չուենեամ :

Մ. յս դիտաւորութիւնը պէտք է որ
ամմէն ժամանակ ունենամք • բայց
առաւել աղօթք ըրած ժամանակնիս •
Ս ն զի աղօթք ընողը՝ ուր տեղ որ ըլլայ •
աղօթք ըրած ժամանակը նոյ առջևը կանգ-
նած է • ուրեմն մեծ զգուշուի պէտք է՝
որ աղօթքնիս նոյ ընդունելի ըլլայ :

Զգուշութիւն լեզուի :

Լեզուի համար սուրբ յակոբոս ա-
ռաքեալը կը գրէ թէ՝ * Լեզու փոքր
ինչ անդամ է , և մեծամեծս բարբառի •
|| Եսէ • 7 • 5 :

Մտոր համար հոգացաւ նա և երկու
դուռն դրաւ լեզուին • դուռ մի է ակ-
ռաներուն շարքը , և դուռ մի ալ՝ շքե-
թունքները • ասկէց պիտի սորվի մարդ՝
որ ամմէն տեղ լեզուն պիտի չի բարբա-
ռի • միտքը դռնապան պէտք է ըլլալ՝ որ
ըստ վայելչութե՛ բանայ ու փակէ :

Մտոր համար շատախօս մարդիկներուն
բերանը կըսվի անդուռն բերան • լն որում

միշտ խօսիլ կուզենս • և երանի եր՝ թէ
բարի բան խօսէին • բայց շատխօսուէ
մէջը հրքան զգուշութի ըլլայ՝ ցորենին
հետ որոմալ կրնայ խառնըվիլ • սպա
շատխօսութիւնը վտանգուոր է :

Մտնէն զգայուէց վրայ պէտք է որ քրիս
տոնէին միտքը զգուշուի ընէ • զոր օրինակ՝
աչքին՝ որ մեղք ծնանելու տեղերը չի
նայի • ականջին՝ որ մեղաց խօսքէր չի
լսէ , և • բայց յատկապէս լեզուի վրայ
մեծ զգուշուի պէտք է որ ընէ • վն զի լե
զուի մեղքերը՝ ուրիշ զգայարանաց մեղ
քերէն շատ առաւել են • անով մարդ
զմարդ կը խաբէ , կանխծէ , կը բամբա
սէ , մաանուի կրնէ , եղբօր սիրտը կը վի
րաւորէ , և պարզամիտը գլխէ կը հանէ •
մէկ խօսքով ինչպս սք առաքեալը կրսէ ,
* Նովաւ օրհնեմք զտրն և զհայր , և
նովաւ անխծանեմք զմարդիկ՝ որք ըստ
նմանութե այ արարան • ॥ յակ • ք • 9 :

Մյս սք առաքեալը համառօտ կը խօ
սի • վասն զի կրսէ՝ ॥ նովաւ անխծանեմք
զմարդիկ • ॥ բայց դուք տեսէ՛ք ինձ սի
րելէք , որ հիմայ մեր ժամանակը այնպէս
գարշէլի լեզուներ կը գտնըվին՝ որ ոչ

միայն զմարդիկ կանխածանեն , այլ և
 իւրեանց լեզուով զանձ ալ կանարգեն .
 որպիսի են այն չար քրիստոնեաները՝ որ
 հաւատքի , օրէնքի , հոգւոյ , բերանոյ ,
 երեսի , գերեզմանի , և այլ այսպիսի
 բաներու կը հայհոյեն :

Ի սէ՛ անդգամ հայհոյիչ՝ թէ այս հայ
 հոյածներդ ի՞նչ են . հաւատքը առ անձ է .
 || Հաւատամք ՚ի մի անձ . || օրէնքը անձ ալ
 վաւ մեզի . * Տաց զօրէնս իմ ՚ի միաս
 նոցա . || Երէմ . ԼԾ . 33 :

Հոգի մարդոյ՝ փչումն է նոյ . * Եւ
 փչեաց յերեսս նր շունչ կենդանի , և ե
 ղև մարդն հոգի կենդանի . || Ճննդ . Բ . 7 :

Ի՛ւրան քրիստոնէին՝ նոյ դուռն է .
 երբ զանձ կը յիշէ՝ նոյ ամենաօր անուր
 անոր բերնէն դուրս կելլայ . և երբ նբ
 հաղորդութի կառնէ՝ անձ անոր բերնէն
 ներս կը մտնայ : Երես մարդոյ լը ներք
 նոյն՝ նոյ պատկերն է . * Ի ստ պատկերի
 նոյ արար զնա . || Ճննդ . Ծ . 27 :

Իսկ գերեզմանք քրիստոնէից խաչիւ
 և աւետարանաւ կը կնքըվին . թող մեռելի
 հետ գերեզմանատուր երթան տեսնան ,
 ապա թող մտածեն այսպիսի հայհոյիչք՝

Թէ ինչպէս զձժ կանարգէն :

Ասանկ հայհոյիչներուն մի համբերէք սիրելիք . եթէ զաւակ կամ աշակերտ է , չարաչար պատուհասեցէ՛ք՝ որ զգաստանայ . եթէ ազգական կամ բարեկամ է , նմանապէս խրատեցէ՛ք՝ որ դարձի գայ . ապա թէ չի գայ՝ իբրև հեթանոս համարեցէ՛ք այնպիսի անդարձ հայհոյիչը . ահոր հետ հաց մի՛ ուտէք , բարև մի՛ տայք և մի՛ առնէք՝ մինչև որ զգաստանայ , և իրէն հայհոյութիւններէն ետ կենայ :

Աւ դուք ամմէննիդ ալ մեծ զգուշութիւն արարէ՛ք ձեր լեզուին վրայ . իմացէ՛ք՝ որ քրիստոնէին լեզուն՝ նոյն փառաբանութեամբ գործիքն է . և ձժ ամմէն բարեգործութիւն աւելի՛ մեր լեզուի փառաբանութիւնը կուզէ . այս է դաւիթ մարգարէին ըսածը .

* Սատոն նոյ պատարագ օրհնութեան .
 || սաղմ . խմբ . 14 :

Աղօթք :

Որովհետև մարդս նոյ ծառան է , պէտք է որ իր ծառայ ըլլալը ճանչնալով՝ նոյ ծառայութիւն ընէ :

Աւ մի թէ ձժ ամենակարող մեր ծա

ուայութերը կարօտ է , քան լիցի • մեր
մեկ բանին կարօտութի չունի • կրսէ
դաւիթ մարգարէին բերանովը • * Ա՛ջ
ուտեմ զմիս զուարակաց քոց , և ո՛չ զար-
իւն նոխազաց քոց ըմպեմ • || սաղ . խթ . 13 :

Հաստ ինչ կերպ ծառայութի պէտք
է մեզի ընել • ահա և այն իմացուց մե-
զի նոյն մարգարէին բերանովը ըսելով •
* Սասն այ պատարագ օրհնութեան •
|| սաղ . խթ . 14 :

() օրհնութի պատարագը աղօթքն է , որ
ջերմեռանդ սրտիւ այ կը մատուցանեմք •
Յերաւի ամ մեր մեկ բանին կարօտ չէ •
սակայն մենք ապերախտ չի մնալու հա-
մար՝ մեր աղօթք ընելը կուզէ :

Աղօթքը երէք կերպ է , ինչպէս սք
Յակոբ մըճբնայ հայրապետը կրսէ , և
ասոնք են , խնդրուած , օրհնութի ,
և գոհութիւն :

Խնդրուածն այն է՝ որ մեղացի թո-
ղութի , կամ թէ այլ ինչ արժանաւոր
բան մը կը խնդրես յայ :

() օրհնութիւնն այն է՝ որ զամ կօրհ-
նես՝ իրէն կերպ կերպ սքանչելի գօր-
ծոցը համար :

Գոհութիւն այն է՝ որ շնորհակալ կը լաս՝ քեզի ըրած երախտեացը համար ։

Ես հիմա ասոնք քեզի չեմ կրնար տեղնի տեղը հասկըցընել՝ այս համառօտ տետրակին մէջը . միայն թէ այս քեզի կը սեմ, դուն ո՞ր աղօթքը գիտես, այն ըսէ աղօթք կանգնած ժամանակը . այս էրէքըս ամմէն աղօթքի մէջ ալ կը գտնուի . թէպէտ դու չես հասկընար ըսած աղօթքդ, բայց անքու սիրտը ու քու միտքը գիտէ, և քեզի պէտք եղածը կու տայ . դու միայն պարկեշտօրէն աղօթք ընելը նայէ ։

Աղօթքներուն գլխաւորը Հայր մերն է . անոր ետեւէն, Անկանխիք առաջի քո . Հաւատով խոստովանիմ . նմանապէս Սաղմոս, Նարեկ : Եւ ամմէն ծնօղ պարտաւորութի՛ ունին իրէնց զաւակացը սա աղօթքներըս սորվըցընել, կամ սորվըցընել տալ ։

Աղօթքի ժամանակ էրբէ կըսես նէ, ամմէն ատեն է . վն զի քն արն մեր կըսէ .

* Պարտ է յիմ ժամ կալ նց յաղօթս՝
և մի՛ ձանձրօնալ . || զո՛ւն . ժը . 1 :

Ի այց այս բանս մի՛ այնպէս իմանար ,
 ունի թէ միշտ բանըդ գործըդ թող առւր ,
 ու աղօթքը ըրէ . հասցա ըսել է թէ՛ նոյն
 ահն ու երկիւղը միշտ սրտիդ մէջ ունե-
 ցիր , և ժամանակին ալ աղօթքըդ ըրէ :

Ժամանակ աղօթից :

Աղօթքի ժամանակն այս է . մեկ մը
 պատկէլու ժամանակըդ՝ պէտք է որ
 կանգնիս աղօթք ընես , և գոհուի՛ տաս
 նոյն . որ այն օրը քեզի ողջ պահեց , առուր
 փորձանքներէն ազատեց , ու իրիկվան
 ժամանակին հասուց :

Եւ ալ պիտի խնդրես որ , առաջիկայ
 գիշերովանը փորձանքներէն ալ ազատէ , և
 առանց մեղաց պահելով՝ առողջ մարմ-
 նով առաւօտուն հասցընէ :

Նմանապէս առաւօտուն քունէդ ար-
 թըննաս նէ , յառաջ պէտք է երեսըդ
 խաչահնքես . և գիտցած աղօթքներըդ
 զուրցելով՝ լաթերըդ հագնիս , ու եկե-
 ղէցի երթաս , եթէ չես կարեր երթալ
 նէ , տունը աղօթէ :

Սակայն այր մարդիկ և տարիքը ա-
 ռած կանայք՝ պարտաւորութի՛ ունին

ամմէն օր եկեղեցի դնալ , մանաւանդ
կիրակի ու տօն օրերը :

Եւստիպիոս ըլլաք, մեկ մարդ որ հիւանդ
չէ , բանախի մէջ չէ , երկար ճանապարհ
հորդուէ մէջ չէ , եկեղեցի չի գըտնը
ված տեղ չէ , հապա անձամբ առողջ է ,
և գըտնըված տեղը եկեղեցի կայ , գոնէ
կիրակի ու տօն օրերը եկեղեցի չերթայ ,
և իւղաբերից աւետարանի ձայնը չի լը
սէ , նաև սբ անմահ պատարագը կա
տարեալ չի տեսնայ , այնպիսին ծանրա
պէս կը մեղանչէ ծուլութի մեղօք :

Ս ս ղի ճշմարիտ քրիստոնէաները ան
ատենը եկեղեցոյ մէջ հրեշտակաց նման
ղմծ կը փառաբանեն , ու ինքը ծուլու
թեամբ պառկած է , կամ ելեր իր գործը
կը գործէ :

Եստիպիոս շատ գեշ են անոնք , որ ե
կեղեցոյ ժամանակը խահվէի կամ պեր
պեռի խանութի մէջ քէֆ չաթմիշ կը
նեն . սոյ պաշտօնը իրենց քէֆին հետ
կը փոխեն . ասոնք չէ թէ միայն իրենց
հոգւոց կորրստեան պատճառ կըլան ,
հապա բոլոր հայոց ազգիս նախաախնք
կըլան :

Ս Կ զի ուրիշ ազգերը կը տեսնան որ ,
 հայոց ազգէն շատ մարդիկ աղօթքի ժա-
 մանակ խաչվէնէրը ու պէրպէսի խա-
 նութները լեցվեր են , բոլոր ազգը կը նա
 խատեն , ինչպէս շատ անգամ լրաված է :

Ս Կ յայնպիսի լոկ անուամբ քրիստոնէ-
 ից . և առաւել վայ անոնց՝ որ այս բարի
 խորատներըս լսելով՝ չեն զգաստանար :

Ի այց դու՝ որ բարեպաշտ քրիստոն-
 էայ ես՝ հայրաբար կը խրատեմ զքեզ .
 առաւօտ երեկոյ աղօթքիդ ժի՛ր կացիր .
 ամէն օր՝ մանաւանդ շաբաթ ու կիրակի
 օրերը եկեղեցիէն ետ մի՛ մնար , կանուխ
 եկեղեցի գալու ջանք ըրէ . և մինչև նք
 անմահ պատարագի օրհնուէ մասը չառ-
 նես նէ , եկեղեցիէն դուրս մի՛ ելաներ :

() աւակ , թոռն , փոքր եղբայր , կամ
 աշակերտ ունիս նէ հէտըդ տար , քովըդ
 կանգնեցուր . եթէ ձայնը գրրված տղայ
 չէ նէ , մի՛ թողուր որ դասը երթայ , ու
 քահանաներուն կամ տիրացուներուն
 նեղութի տայ , անձային ժամերգութիւր
 խափանէ , և շնորհք առնելու տեղը պա-
 տիժ առնու : Հարպա պարկեշտօրէն քո
 վըդ կանգնեցուր , որ քեզի հետ աղօթք

ընէ , և անոր բարի օրինակ եղիւ :

Դու ալ որ ժողովուրդ ես՝ տիրացու չես՝ դասը մի՛ կանգնիր , վնդի դասը միայն աստիճանաւորաց տեղ է :

() զո՛ւշ կեցիր , չըլլայ որ եկեղեցոյ մէջ ամուր ձայնով աղօթք ընես , ու քովը կանգնողին միտքը պղտորես . հապա մըտօքըդ աղօթք ըրէ , որ միայն
 անձ լսէ :

Եկեղեցի գնալու կերպ :

Տանըդ դռնէն ելած ժամանակըդ՝ երեսըդ խաչակնքէ , ու գիտցած աղօթքներըդ ըսելով՝ որքան կարես արտորանօք և հոգևոր ուրախութի՛ւն եկեղեցոյ ճանապարհը քալէ . դաւիթ մարգարէին պէս ըսելով . * Աւրախ եղէ ես ոյք ասէին ցիս , ՚ի տուն ան երթիցուք մէք . || սաղմ . Ճիւն . 1 :

Երբ եկեղեցոյ ներսի դուռը հասնիս , գրլուխըդ բաց , ու փափագանօք քովի շէմը՝ ուր տեղ որ սք խաչի նշան կայ՝ համբուրէ . և ապա ըսէ . * Մ. յլես ըստ բաղում ողորմութե՛ք քում մտից ՚ի տուն քո . երկիր պաղից ՚ի տաճար սք

քո երկիւղիւ քո • || սաղմ • Է • 8 : Եւ
երեք անգամ ծնրադրութի ըրէ :

Յետոյ մինչև ժամ օրհնելու ժամա-
նակը՝ մտածական աղօթք ըրէ չըլլայ
որ քովդ կանգնողներուն բարև տաս
ըսելով , Իարի աղօթես : || ն զի մար-
դավարութիւն չէ՝ մարդ մը թագաւորի
առջև կանգնած ատենը քովիններուն
բարև տայ , ու հետերնին խօսի :

Հապա դուն՝ որ երկնաւոր թագա-
ւորի առջևը կանգնեցար , ամենևին քե-
ղի պէտքը չէ որ քովիններդ ճանչնաս ,
ու անոնց հետ խօսակցուի ընես • միայն
թէ եկեղեցոյ մէջ քո խօսակցութիւդ նոյ
հետ պիտի լինի :

Երբ աղօթք կրնես , դու նոյ հետ կը
խօսիս • և երբ նք աւետարան մտիկ
կրնես , նծ քեզի հետ կը խօսի • ապա
զգուշ կեցիր՝ որ եկեղեցոյ մէջ ամենևին
չի խօսիս՝ ոչ քիչ և ոչ շատ • աս դին ան-
դին ալ չի նայիս • միայն թէ քու աչքըդ
դէպի նք սեղանը ըլլայ • վն զի մարդուս
աչքը ուր է նէ , միտքն ալ հոն կըլլայ :

Կը գտնուիին ոմանք՝ որ Իսկ որք ա-
սենին վերջը՝ ձեռքերնին կը թօթվեն ,

և ոմանք ալ ժամէն ելլալու ատենը կը
 ծռին , երկու ձեռքերնին գետինը կը
 դրպցընեն , ու վերջը երեսնին ու մօ-
 ղուքնին կը քսեն , և երկու կողմը կանգ-
 նողնեքուն բարև տալու պէս՝ ॥ ողորմի
 անձ ॥ կըսեն . որ շատ աւելորդ , անշը-
 նորհք , և ծաղրական արարմունքներ
 են . դու զգո՛ւշ կեցիր , այսպէս ան-
 վայել արարմունքներ մի՛ ըներ :

Ողջունի ժամանակը՝ ողջոյն տըվօղը
 պիտի ըսէ , ॥ Վնն ՚ի մէջ մեր յայտնե-
 ցաւ ॥ . իսկ ողջոյն առնօղը պիտի ըսէ .
 ॥ () ըհնեալ է յայտնուին քի ॥ . այլ ու-
 ըիշ բան մի՛ ըսեր :

Վմանապէս թէ առաւօտեան և թէ
 երեկոյի ժամուն եկեղեցիէն արձակման
 ժամանակը՝ սք աւետարան , սք խաչ ,
 կամ սք մասունք համբուրելու երթա-
 նէ , պարկեշտութիւն և բաց գլուխ դնա՛ ,
 և համբուրելու ատենը ॥ մեղայ սոյ ॥ ըսէ .
 քահանան ալ քեզի կըսէ՝ ॥ անձ թողուի
 շնորհեցէ ॥ :

Բայց գիտնալ պէտք է որ՝ այս թո-
 ղութիւններէն մեղաց համար է . գթած
 մայրն մեր սք եկեղեցի այսպէս սահմա-

ներէ որ, սբ. աւետարան կամ քահանայի
աջը համբուրելով՝ մեր գործած ու մոռ
ցած կամ փոքրիկ մեղքերուն թողու
թիւն լինի:

Վասն ապէս կարգաւ և պարկեշտութե
րթալու է սբ. Ննդեան օրը՝ օրհնեալ
ջուր առած ժամանակնիս, ևս առաւել
սբ. հաղորդութի առած ժամանակնիս՝
պէտք է որ ահիւ և երկիւղիւ յառաջ
երթանք, որոյ թէ մենք արժանի չենք,
և յառաջ երթալու չենք համարձակիր,
ի՞նչ զմեզ կը կոչէ:

Բայց կան այնպիսի անխոհեմ մար
դիկ, որ իրենք զիրենք ամմէնէն աւելի
արժանաւոր համարելով ջանք կրնեն յա
ռաջ անցնիլ, և ամմէնէն յառաջ սրբութի
առնուլ, ունի թէ ըսելով՝ ես ոչ եմ իբրև
ղայլս ՚ի մարդկանէ. իբրու թէ քովը
կեցողներուն կըսէ, ես ձեզի պէս մե
ղաւոր չեմ, ես արդար եմ, դուք մեկդի
կեցէք. ես յառաջ սրբութի առնում,
դուք վերջը առէք. թէնպէս այս մարդկանց
միտքը այն չէ, բայց գործքերնին այն է:

Սակայն դու որ բարեպաշտ քրիս
տոնեաց ես՝ հոգևոր խրատ մտիկ ըրէ.

սրբութի՛ն առած օրրդ՝ կանուխ սբ է
 կեղեցի գնա՛ , խոստովանահայրրդ գը
 տիր՝ արձակուամ ա՛ռ . և յետոյ ջերմե
 ուանդութե՛ք աղօթքրդ ըրէ . մաքսաւորին
 ըսած աղօթքը շատ անգամ ըսէ . * ՄԺ՝
 քաւեա՛ զիս զմեղաւորս . || Ղուհ . Ժը . 13 :
 ԼԵ՛ւ այսպիսի խոնարհութե՛ք դու արժա
 նի կըլլաս սբ հաղորդութե՛ն :

ՄԿա զգո՛ւշ կեցիր , Ժամանակէն յա
 ռաջ դասը մի՛ մընար . նայէ՛ որ դուն
 ամմէնէն վերջը հաղորդ առնուս :

Ս արի դասի կողմէն ներս մտիր , գը
 լուխըդ բաց . փեշերըդ վըայ բէր . է
 րեսըդ խաչակնքէ՛ . և ամ ջերմեռան
 դութե՛ք սրբութի՛ն ա՛ռ :

Յետոյ վերի դասի կողմէն դո՛ւրս ելիր
 բայց եկեղեցիէն դուրս մի՛ ելաներ . մին
 չև () րհնեալք եղերուքը կանգնէ , ու
 աղօթք ըրէ և շնորհակալ եղիր , որ ար
 ժանի եղար զքս՝ սրտիդ մէջը ընդու
 նելու . և աղաչանք ըրէ որ ամ զքեզ ՚ի
 մեղաց հեռի պահէ , որ ՚ի քնէ չի բա
 Ժանիս . և աղօթքիդ պատճառաւ էթէ
 եկեղեցոյ մէջ քիչմը ուշ մնաս նէ՛ հող
 չէ , վս՝ զի քի սիրոյն համար է :

Որքանութի ժամակարգուէ, և խորհուրդք նոց :

Եկեղեցոյ մէջ մեկ օրը եօթն անգամ
աղօթք սահմանված է, ինչպէս դաւիթ
մարգարէն ալ կրսէ . * Եօթն անգամ յա
ւուր օրհնեցից զքեզ . || սաղմ . ՃԺԸ . 164 :

Ղաաջինն է՝ Գիշերային ժամերգու
թին . որ կրսկրսի՝ ՏՐ զի բազում էն, և
կաւարտի մինչև ՚ի Սքաք առաւօտուն :
Ղյն ատենը պէտք է խորհիմք, որ քն
ի մէջ գիշերի ծնաւ՝ զմեզ փրկելու հա
մար, և ՚ի մէջ գիշերի յարեաւ՝ մեզի յա
րութի տալու համար . և ՚ի մէջ գիշերի
պիտի գայ դատաստան ընելու համար .
ինչպէս նբ աւետարանը կրսէ . * ՚ի մէջ
գիշերի եղև բարբառ, ասհա՛ փեսայ գայ
արիք ընդ առաջ նր . || ճապ . իե . 6 :

Ղպա քրիստոնէից պէտք է, այս գիշե
րային ժամերգութե՛ ժամանակը՝ իմաս
տուն կուսանաց պէս արթուն ըլլան,
հոգւոյ լապտերը վառեն, որ յիմար կու
սանաց պէս արքայուէն դուրս չի մնան :

Երկրորդն է՝ Ղաւօտեան ժամերգու
թին . որ կրսկրսվի՝ Սքաք առաւօտէն,
և կաւարտի մինչև Եղեցի անուն տեառն

օրհնեալը: Այն ատենը պէտք է խորհիմք, որ յառաւօտեան ժամէն սկիզբն արար ձեռնայն աշխարհիս ստեղծմանը. ինչպէս ձեռնաշուք գիրքը կիմացընէ. * Աւելեւ երեկոյ՝ և եղև վաղորդայն՝ օր մի. || Ճննդ. Թ. 5:

Աւելեւ փրկիչն մեր յառաւօտեան ժամուն միշտ ՚ի տաճարն կերթար. ինչպէս նաև աւետարանը կըսէ. * Ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա ՚ի տաճարն լսել ՚ի նմանէ. || Պատմ. Թ. 38:

Ասկէց յայանի է որ՝ ինքն քնամէն ժողովուրդէն յառաջ տաճարը կերթար. Նաև զատկի օրը յառաւօտեան ժամուն երևեցաւ իւղարէր կանանց. մեզի ալ կերևի՝ եթէ այն ժամանակին աղօթքի կանգնիք նէ:

Արրորդն է՝ Արևադալին ժամերգութիւն. որ կըսկըսի՝ Աղեցի անունն ինչ օրհնեալէն, և կաւարտի մինչև ՚ի Ղաշուն: Այս ատեն պէտք է խորհիմք, որ ինչպէս զգալի արեգակը իրէն ճառագայթը աշխարհիս վերայ կը ծագէ. նմանապէս իմանալի արեգակն քն՝ իւր շնորհաց լոյսը մեր սրտին մէջը կը ծագէ, եթէ

այն ժամանակին աղօթքի կանգնիմք նէ :

Չորրորդն է՝ Պաշուին ժամերգունն .
 և է երեք Ողորմեայն : Առաջին ողորմեայն
 է երրորդ ժամու աղօթք : Այս տեղս
 պէտք է խորհիմք , որ մեր նախամայրն
 և այ յերրորդ ժամուն խաբվեցաւ , և
 այ շնորհքէն զրկեցաւ . և հոգին սբ ան
 յերրորդ ժամու իջաւ վերնատունը սբ
 առաքելոց վրայ , և զայն կորուսած շը
 նորհքը նորէն տվաւ . մեր վրայ ալ
 կիջնայ , և իւր շնորհքը կուտայ՝ եթէ
 այն ժամանակին աղօթքի կանգնիմք նէ :

Երկրորդ ողորմեայն է վեցերորդ ժա
 մու աղօթք : Այս տեղս պիտի խորհիմք ,
 որ այս վեցերորդ ժամուն մեր նախա
 հայրը մեղանչեց , և ՚ի նոյն ժամուն քն
 արն մեր խաչին վրայ բեւեռեցաւ :

Երրորդ ողորմեայն է իններորդ ժա
 մու աղօթք : Այս տեղս պիտի խորհիմք ,
 որ այս իններորդ ժամուն քն խաչին վր
 քացախ և լեղի խմեց , և աջակողմեան ա
 լազակին դրախտը տրվաւ , նաև այն
 ժամուն իւր ամենասբ բանական հոգին
 հօր այ ձեռքը աւանդեց : Այս բանե
 ըս մեզի կը սորվեցընէ սուրբ Ներսէս

չսորհալին՝ Մ. յսօր անճառին մէջը:

Հինգերորդն է Երեկոյեան ժամերը գուժին . որ կըսկըսի՝ Խոնարհեցոէն , և կաւարտի մինչև Տր ւծ փրկուէ խնոյ ՚ի տուէ կարդացին: Մ. յս տեղ մաածեւու է՝ որ քս այն ժամանակը խաչէն իջուցին:

Սեցերորդն է Խաղաղականին ժամերգուին . որ կըսկըսի՝ Տր ւծ փրկուէ խնոյէն , և կաւարտի մինչև վերջը:

Մ. յս տեղս խորհիլ պէտք է , որ քս այն ժամանակը գերեզմանին մէջը թաղվեցաւ:

Եօթներորդն է Հանգստեան ժամերգուժին . որ է Եկեացէն իւր սարօքն: Մ. յս տեղս պէտք է խորհիլ , որ քս յարուժի առնելէն ետև՝ յայս ժամանակն վերնատան մէջ դուռը չի բացուած առաքեալներուն երևեցաւ . վեզի ալ կերևնայ վերջին օրը՝ եթէ այս սահմանված ժամանակները ուղիղ գիտաւորութեալով ի կանգնիմք նէ:

Համառօտ մեկնութի արարողութե ւք պատարագին:

Մե՛նասիք պիտրագի խորհուրդը՝ ւք եկեղեցոյ եօթն խորհրդոց մեկն է . սա

կայն այս խորհուրդը անքննելի է, ինչպէս
ամենաւսեւ երրորդուէ խորհուրդը, մեկալ
վեց խորհուրդներուն մարդուս միտքը
փոքր ՚ի շատէ կը հասնի, բայց սեւ պատա
րագին ամենևին չի կը ընար հասնիր:

Եւս միայն մեզի խօսելու ու ձեզի լսե
լու կարելի եղածները հիմա ըսեմք:

Ուստի նախ գիտնալ պէտք է, որ սեւ
պատարագի խորհուրդին մէջ՝ երեք կերպ
ընթերցմունք կայ. իմ՝ մաղթանք քահա
նայի, քարոզ սարկաւագի, և երդ դրպ
րաց: Ժողովուրդին պէտքը չէ որ ձայնա
կից ըլլան քահանային կամ սարկաւագին
հետ, այլ միայն ջերմեռանդուք ականջ
դնեն անոնց կարգալուսն, սակայն դրպ
րաց կարգացմունքին թող ձայնակից
ըլլան մտքով և ոչ բերանով:

Երկրորդ՝ աս ալ գիտնալ պէտք է,
որ սեւ պատարագին խորհուրդին մէջ
երկու կերպ արարողութի կայ, մեկը
Ժամուկ, մեկալը յայանի. որոնց վրայ
այնքան խօսինք հիմա, որքան ժողովուր
դեան պէտք է գիտնալ:

Այլ եկեղեցին՝ երկնաւոր թագաւորին
պալատն (սարայրն) է, և սեւ սեղանն՝ ալ

նոր աթոռն է . նաև ժամարար քահանայն
սարկաւադօք և դպրօք պիտի նոյ առջևը
գայ՝ նք պատարագ կատարելու համար :

Ուստի նախ և յառաջ պահարանը կը
մըտնան անոնք . և զգեստաւորեալ զար-
դարեալ դուրս կելանեն՝ յատեան կու-
գան . այն տեղը քահանայն ձեռքերը կը
լըվայ , որ է օրինակ ներքին մաքրուէ .
ինչպէս մեկ մի ալ վերաբերու թէ վերջը՝
մասներուն ծայրերը կը լըվայ . և սա ալ
օրինակ է , որ նք հաղորդուէ մերձեցողը՝
ներելի մեղքերէն ալ պիտի մաքրուի :

Իրաւի՝ նք պատարագը քի չարչարա
նացը ու մահուանը յիշատակն է . բայց
անոր մէջը փրկագործ տնօրէնութեան
ամմէն գործքերը կերևի :

Ի պա քահանայն բեմը կելայ , սեղանին
առջևը կը կանգնի , վարագուրը քաշվե-
լէն ետքը՝ սպաս կը դնէ . և այս կը նշա
նակէ բանին նոյ յըղանալը յարգանդի
ամենօրհնեալ կուսին մարիամու . ասոր
համար ժամարար քահանայն այն տեղը
կըսէ , Հոգին նք եկեսցէ ՚ի քեզ :

Յետ այսորիկ վարագուրի բացվելը , և
քահանային վար իջնալը , և խնկարկելով

Ժողովրդեան մէջ շրջելը, և կրկին բեմը
 ելանելը, և սեղանին առջևը երթալը, կը
 նշանակէ քի՛ տն մերոյ յերկնից յերկիր
 իջանելը, և մարդկանց հետ շրջելը, և
 ապա յերկինս առ հայր համբառնալը:

Մբ՝ անձը՝ է սերոբէից երգը, որ առ
 անձ կաղաղակէին. Մբ՝ սբ՝ սբ, տր զօ-
 ղութեանց: Մ՝ էտարանը՝ կը նշանակէ
 կայծակը՝ որ սերոբէին մեկը ունելէօք
 (մաշայով) սեղանէն առաւ, ու ետայի
 մարգարէին բերանը մօտեցուց:

Մ՝ արգարէական և առաքելական գրք
 եանց կարդացմունքը կը նշանակէ թէ,
 մարգարէներուն գուշակուիլը և առաքե-
 լոց քարոզուիլը միատեղ՝ քի՛ տնօրէնուիլը
 կը ծանուցանեն. անոր համար ասոնցմէ
 ետքը կը կարդացվի՝ քի՛ ամենանսբ տնօ-
 րէնուէ գիրքը, որ է սբ աւետարանն:

Յետոյ երկու ամերնիս իրարու քով
 բերելով հաւատամքը կըսեմք. որ սբ
 Մերսէս լամբրոնացիին մեկնածին պէս
 կը նշանակէ որ՝ ներքին հինգ զգայա-
 րանքնիս աշխարհական մտածմունքնե-
 րէն, և արտաքին զգայարանքնիս մարմ-
 նական գործքերէն յետս քարշէլով,

քրիստոնէականն նբ հաւատոյ դաւա-
նութիւնը կուտամք, ինչպէս որ սորվե-
ցանք՝ մարգարէական, առաքելական, և
աւետարանական նբ գրքերէն:

Յետ այսորիկ ժամարարը կը մերկա-
նայ. եթէ եպիսկոպոս է՝ թագը, ե-
միփորոնը, և հողաթափը կը հանէ.
Իսկ եթէ քահանայ է, սաղաւարտը և
հողաթափը կը հանէ: Ան զի մինչև հի-
մա ժամարարը քի օրինակ էր, բայց ա-
կէ յետոյ այն սարսափելի նբ խորհրդոյն
սպասաւոր կը լայ, և կը կատարէ:

Ան էրաբերուամը՝ կը նշանակէ նբ յով
սէփ անձահօրը՝ և ամենանբ կուսինն նաղա-
րէթէն ելլալ, ու բեթլէհէմ գալերնին:

Ժամարարին կիսով չափ սկիհի ծած-
կոցը բանալը, ու մեկ քով քաշվելը, կը
նշանակէ քի կուսական ամենասուրբ
ծնունդը:

Ան արդասպետը կամ քահանայն միւս
կարգաւորներով յատեան ելլալը ողջոյն
առնելու համար, կը նշանակէ հովիւնե-
րուն մինչև բեթլէհէմ երթալը՝ ասելով
* Եկայք երթիցուք մինչև ցբեթղահէմ,
և տեսցուք զինչ է բաճա այս որ եղև.

Բուրվառ ունօղ սարկաւադին՝ ողջոյն
 տալու համար վար իջնալը՝ կը նշանակէ
 հրեշտակին աւետիս տալը հովիւներուն,
 թէ, * Բ. հաւասիկ աւետարանեմ՝ ձեզ
 աւրախութի մեծ, ղի ծնաւ ձեզ այսօր
 փրկիչ, որ է՝ օծեալ տօր, ՚ի քաղաքի դաւ
 թի. || Պ-ի. Թ. 10: Բն առեւնը սարկա
 ւադները ժողովրդեան զգուշութի կու
 տան՝ ասելով. Օ դրունս զդրունս ամ
 իմաստութեալ և զգուշութեալ ՚ի վեր ընծայե
 ցուցէք զվիտս ձեր. և թէ՛ Բ. հիւ կաց
 ցուք երկիւղիւ կացցուք բարւոք կաց
 ցուք և նայեցարուք զգուշութեալ:

Իսկ եթէ ինչո՞ւ համար այսքան զգու
 շութի կը քարոզվի: Ան զի քի յայտ
 նութեալը այս երկիրս՝ երկինք եղաւ, և
 մարդիկները հրեշտակացան, ասոր հա
 մար հրեշտակաց սէս՝ Աթ՝ սբ՝ սբ, տօր
 զօրուէց, կերպէն դպիրները: Բն առե
 նը ժամարարը կը կատարէ այն ահաւոր
 խորհուրդը, որ քն սբ սիօն վերնատանը
 մէջ սահմանեց, և մինչև հոգի այ եր
 գած ժամանակը կը կատարվի:

Բայտ քի յիշատակը կատարվածին
 սէս, սբերը կը յիշատակվին՝ յամենայն

անձամբնէն սկսեալ: Այն զի յիշատակաւ
 ան մերոյ՝ և ամ սբց Նր, հայրն երկնաւ
 ւոր ընդ մարդկան հաշտեցեալ, ողորմես
 ցի ամցուն՝ կենդանեաց և ննջեցելոց:

Ասոր համար երբ յիշատակութիւները
 կըլլաննայ, համարձակաձայն բարբա
 ոսկ տէրունական աղօթքը՝ Հայր մերը
 կերգեմք:

Արկաւագները երբ երանեալ սբերը
 կը յիշատակեն, սեղանին աջ կողմը կը
 կանգնին. վն զի անոնք վկայեալ յայտ
 նի սբեր են: Աայց յետոյ երբ կենդա
 նիւնները պիտի յիշատակեն, սեղանին
 ձախ կողմը կուգան, Առհուծի և փա
 աբանուծի ըսելով՝ ան ստենը կը յի
 շատակեն, որ անոնց սբ ըլլալը դեռ
 յայանի և որոշեալ չէ:

Արկաւագը բարձր ձայնիւ կը գոչէ՝
 Պաօսխուժէ. որ է ասել՝ ուղիղ դիտաւո
 րութե նայեցէք: Այն զի ահա քս մեր
 վերկուէր համար իւր ամմէն անօրէնութիւ
 կատարեց, ու յերկինս վեր ելաւ. զայս
 նշանակելու համար՝ ժամարարը գլխէն
 վեր կը բարձրացուցանէ սբ խորհուրդը
 ըսելով, Ասրբութի սբց. ըսել կուզէ

Թէ՛ ասիկայ սրբուԹի՛ է , բայց ամե-
նուն չէ՛ այլ միայն սբց է :

Ժամարարին այս խօսքը լռեալով դը
պիրներն ալ կաղաղակեն , Սիայն սբ՝
միայն տր՝ յս քս է . և մենք անով արժանի
եղանք օրհնել զամենասբ երրորդուին .
ասոր համար յետոյ դպիրները կերգեն .
Հայր սբ՝ որդիդ սբ՝ հոգիդ սբ , և այլն :

Եւ որովհետեւ քս տերն մեր յճես
գացած ժամանակը՝ այս ահաւոր խոր-
հուրդը մեզի Թողուց մսիթարուէ հա-
մար . վս որոյ ժամարարը նոյն սբ խոր-
հուրդը սկիհով իւր ձեռքը կառնու ,
և կը դառնայ ժողովրդեանը կըսէ ,
Ի սբ ՚ի սբ պատուական մարմնոյ և
յարենէ տն մերոյ , և այլն : Ըն ատենլ
արժանաւորները կը հաղորդին . և կա-
տարեալ արժանաւոր չեղողներն ալ՝ սբ
սեղանին փշրանք Սասը կը ձաշակեն ,
և հաղորդողներուն մասնակից կըլան ,
և միաբան կաղաղակեն , Այսք ՚ի բա-
րուԹեանց քոց տեր :

Եւ այս ամմէն խորհրդական արարո-
ղուէց վերջը՝ ժամարար քահանայն առ ջի
հանած զգետար կը հագնի , և բեմէն վար

կիջնայ . և այս կընշանակէ քի միւսան
գամ գալուստը՝ որ անային փառօք ՚ի
դատաստան կուգայ . և արդարներուն
օրհնութի պիտի տայ ըսելով , * Եկայք
օրհնեալք հօր իմոյ . || Տառ . ին . 34 :

Ըսոր համար ժամարարը վար իջնալու
ժամանակը կըսէ , Ար օրհնես զայնո
սիկ , ոյք օրհնեն զքեզ իոր :



Ճանուցումն ՚ի վերայ խորհրդոյ ապաշխարուէ :

Ինչպէս սք մկրտութիւն հարկաւոր
խորհուրդ է դեղ սկզբնական մեղաց .
այսպէս ալ՝ ապաշխարութիւն հարկաւոր
խորհուրդ մի է դեղ ներգործական մե
ղաց ան չափահաս քրիստոնէից :

Վե՛նագութ մայրս մեր սք էկեղեցի՝
թէպէտ միշտ կը հրաւիրէ զմեզաւորս
յապաշխարուի . սակայն ընդհանրապէս
և հանդիսապէս ՚ի սկիզբն մեծի պահոց
կը հրաւիրէ յարմար ընթերցուածովք .
և յատկապէս բանիւ եսայեայ մարգա
րէին ասելով , * Եւացարսէք՝ սրբեցա
լուք , ընկեցէք զչարիս ձեր յանձանց ձե

րոց առաջի աչաց իմոց • || Էսայ • Թ • 16 :
 Այլ այս յայտ է թէ ապաշխարութիւն կը
 կատարվի :

Այս ճշմարիտ քրիստոնէին հարկ է ,
 որ ՚ի սկիզբն մեծի պահոց այս ապաշխա
 րութե հարկաւոր խորհուրդը սիրով
 յաճն առնէ :

Հիւանդ մը եթէ կուզէ առողջուի գը
 տանել՝ շուտով վարպետ բժիշկի մը զինքը
 ցոյց կուտայ , ապա եթէ ուշացնէ՝ գու
 ցէ հիւանդութիւնը կը սաստկանայ և անբը
 ժըշկելի ևս կը լայ , ասորպէս ալ՝ հոգևով
 հիւանդ մեղաւորը օր չանցուցած իսկոյն
 պէտք է որ զինքը իւր քահանային ցոյց
 տայ • * Արթայք ցուցէք զանձինս քա
 հանայիցն • ասէ քս • || Ղուկ • ԺԷ • 14 :
 Այց առաւել ևս ՚ի սկիզբն մեծի պա
 հոց ցոյց տալի է :

Տօնավաճառ (բանայիր) գնացողները
 ջանք կրնեն առաջին օրերը առուտուր
 նին լըմընցընելու , գուցէ վերջը յաջո
 դուի չըլար , հոգևոր տօնավաճառ մի է
 մեծ պահքը , ուրտեղ մեղքերնիս պիտի
 ծախենք , ու ապաշխարութի պիտի առ
 նենք , որ մինչև ՚ի սը դատիկ ըբած ա

ղօթքնիս , բռնած պահքերնիս , և տլած
ողորմութիւնիս մեզի հոգևոր ապրանք
ըլլան . ապա թէ ոչ անօգուտ կըմնանք :

Վիտնալ պէ՛տք է այս տեղ՝ որ թէ
պէտ ապաշխարուի՞ կը քաւ վի մեղքեր
նիս , սակայն՝ չէ թէ մեր արդիւնքովը ,
այլ քի շնորհօքը որ միջնորդուի՞ խոր
հրդոյ ապաշխարուի մեզի կը պարգև վի .
էթէ մեր արդիւնքովը լինէր , երբ ու
ղէինք , այն առեւնը կարէ ինք ապաշխարել .
բայց քանզի քի շնորհօքը պիտի քաւ վի
մեղքերնիս . ուրեմն սբ եկեղեցոյ հը
րաւիրած ժամանակը ապաշխարենք .

* Մտաւարկ ժամանակ ընդունելի . ա
հա օր փրկութե . || Է Կրն . Դ . 2 :

Եթէ մեծ մարդմը զմեզ իւր մօտը
հրաւիրէր , ամմէն դործքերնիս կը թո
ղէինք և շուտով կերթայինք . ապա ա
ռաւել ևս սբ եկեղեցոյ հրաւիրանացը
սիրով և շուտով երթանք . բայց էթէ ու
շացընեմք , և մեծ պահոց վերջին օրերը
թողումք , ոչ միայն մենք անպատու կը
մնանք , այլև անպատուի կընենք սբ
եկեղեցւոյ . ուրեմն բարեպաշտ ընթեր
ցօղ կամ մտիկ ընօղ մեծ ջանք ըրէ՛ որ

մեծ պահոց առաջին շաբթուն խոստովանելով , ապաշխարութեան սրբարար խորհուրդը յանձդ առնես :

Վերայ ճշմարիտ ապաշխարութե :

Ինչ բան պէ՛տք է ճշմարիտ ապաշխարողին . 'Վախ՛ դժուշաւոր քննութիւնէլ գործած մեղքերուն վր , թէ ի՛նչ են , և ո՞րքան են . և ինչպէս համար տալու տղայքը յառաջագոյն լաւ կը սերտէն համարնին , որ անսխալ կարգան վարժապետին առջևը , այսպէս՝ դու ալ խոստովանութի՛դ յառաջ լաւ քննութիւրէ ամմէն մեկ մեղացդ վրայ , որ առանց սխալանաց խոստովանիս , և չըլլայ թէ , խոստովանանքի երթաս , ու բերանդ գոցես կենաս , այն մարդուն պէս , որ հարսանեաց տունը գնաց առանց հանդերձի հարսանեաց :

Միայն թէ այս գիտցիր , որ ամմէն միտքերնուս անցած չար խորհուրդները մեղք չեն . հապա որուն որ կամբերնիս ալ հաճութի՛ կուտայ , այն է մեղք . ուստի լաւ քննութիւրէ՛ ըրէ՛ թէ որքան կամաւոր չար խորհուրդ , կամ բանիւ և

գործով մեղքեր ունիս, միտքդ պահէ, որ խոստովանութի մէջը մեկիկ մեկիկ զուրցես խոստովանահօրդ:

Վհա այսու պատճառաւ զղջումը սահմանուած է, և խոստովանութիւն յառաջ կրավի, որ խոստովանորդւոյն միտքը իյնայ, եթէ մոռցած մեղք ունինէ իւր բերանովը յատկապէս խոստովանի. ապա թէ ոչ՝ զղջումը միայնակ անօգուտ է. վասն զի գրեալ է, * Վսա դու նախ զանօրէնութիւն քո՝ զի արդարասցիս. || Էսայ. խի. 26:

Երկրորդ՝ պէտք է զղջումն ՚ի սրտէ ՚ի վր անգործեալ մեղացդ, միտք բերելով թէ այն մեղքերը զքեզ ո՞րքան շքնորհքներէ զրկեցին, և ո՞րքան թշուառութեց մէջ ձգեցին, և ոչ այսչափ միայն՝ այլև զքեզ փրկողին քանի՞ վնաս հասուցին, ինչպէս սյօղոս առաքեալը կրսէ,

* Սերստին ՚ի խաչ հանել անձանց զորդին այ. և դարձեալ խայտառակել. || Էբր. Դ. 6: Վսոնք մտածելով կը գանիս կը զըզուիս գործած մեղացդ վրայ, և այս է զղջումն:

Երրորդ՝ պէտք է առաջադրութի, և

այսինքն ուխտ ընել , անդամ մի ալ այն
մեղքերը չգործելու . և բողոքովին կլա-
րես նեաես մեղաց արմատները սրտէդ և
պատճառները դուրսէն . ևս և՛ ուխտ
ընես , չէ թէ միայն ՚ի մեղաց հեռի մնալ ,
այլ և սրտի մաօք առաքինուէց հեաւել :

Չորրորդ՝ պէտք է խոստովանութի .
ապաշխարութե հոգին այս տեղ է , լաւ
մտիկ ըրէ :

Ինչոստովանիլ պէտք է քահանային ,
որուն որ յանձնէրէ ղքեզ վիճակին ա-
ռաջնորդը . ուստի՝ ամմէն քրիստոնեայ
իւր խոստովանահայրը պիտի ճանաչէ և
անոր խոստովանի : Այս եթէ այսօր մե-
կին՝ վաղը մեկալին խոստովանի , կամ մեկ
քանի մեղքը մեկ քահանայի՝ և մեկ քա-
նի մեղքն ալ ուրիշ քահանայի , եկեղե-
ցական բարեկարգութիւնը ավրօղ կըլլայ .
հապա ամբողջապէս բովանդակ մեղքը
իւր սեփական քահանային պէտք է խոս-
տովանիլ : Մակայն ՚ի հարկաւորուէ պա-
հու , կամ մանաւանդ օտարականք , որք
չունին յատուկ քաղաք կամ գիւղ . որ
քահանայի որ խոստովանին ղէն չունի .
միայն թէ այս ըստծս անոնց համար է ,

որ փուլ՝ պատճառներով խոստովանա-
 Տայր կը փոխեն . իսկ եթէ բանաւոր
 պատճառ ունին՝ թող խօսին առաջնոր-
 դին , ՚ի հարկէ այն ալ՝ ուրիշ խոստովա-
 նահօր կը յանձնէ :

Է Խոստովանութիւն ծով բերանով
 ըլլալ վայելուչ է . սակայն հիւանդաց ,
 կամ բազմութի եղած տեղերը ներելի է :

Ը Խոստովանութիւն գանկատօրէն պէտք
 է ըլլալ . ասոր համար սքն կիւրեղ կըսէ .
 Նախքան զամբաստանելն սանյի զմէնջ ,
 մեք նախաժաման լիցուք ամբաստանել
 զմէնջ , զի նա այլ ոչ ևս կարէ ամբաս-
 տանել , յորժամ մեք առաջի քահանայի
 խոստովանելով ամբաստանեմք :

Ը Լ յս գանկատ որոշակի պէտք է
 ըլլալ . վասն զի՝ բաւական չէ որ ըսես ,
 գլխովս մեղուցերեմ , աչօքս մեղուցե-
 րեմ , և այլն . հապա՛ որոշ որոշ մեղքերդ
 պէտք է որ խօսիս . եթէ ամաչել գայ
 վրադ՝ զէն չունի , մեծ ապաշխարանք է
 այն քեզի . միայն թէ՛ այնքան աւելի մի՛
 ամաչեր որ մեղքերդ պահես , գիտցի՛ր՝
 խոստովանատայրդ ալ քեզ նման մեղան-
 չական մարդ է , ապա եթէ հիմայ մեկ

մարդէմը ամաչելով ծածկես , դատաստանի օրը , նոյ , հրեշտակաց , և նամ նբց առջևը քու մեղքերդ զքեզ պիտի խայտառակեն , ինչպէս կըսէ երեմիա մարգարէն : * Չարիք քո կշտամբեցեն զքեզ . || Է . 19 :

Եւստ մի ամաչէր խոստովանիլ , որ չամաչեցիր գործել . նոյ առջևը գործեցիր , քահանայէն ինչու կամաչես . առաւել ամօթ՝ գործելն է , քան թէ խոստովանաճօր առջին յայտնելն . թոյն (ղէճիր) խրմեցիր մեղքը գործելովդ , դեղթափ (բանղէճիրն ալ) խրմէ խոստովանելով :

Եւ խոստովանութիւնը պարագայիւք պէտք է ըլլալ . վն զի՝ սոսկ մեղքերուդ անուներ տալ բաւական չէ . հապա՝ հարկաւոր պարագաներն ալ պէտք է որ խօսիս :
Պարագաներն ալ ասոնք են :

ն Եւ նչ է գործած մեղքդ . հպարտութիւն , եթէ բարկուի , ագահուի , եթէ որկրամոլութի , և այլն , ասոնց ալ ո՞ր տեսակն է : Եւ որ օրինակ ագահուի է գործած մեղքդ . սակայն ագահուիը շատ տեսակ ունի . վն զի՝ ագահութի է

անշահը աղէկի տեղ ծախել, ագահութի է
 ուրիշին աղէկ ապրանքը վար զարնել,
 քուկդ ծախելու համար, ագահութի է
 մշակիդ իրաւունքը կտրել, ագահութի է
 այլոց ապրանքը գողնալ, ասոնք մեկզմե-
 կէ ծանր մեղքեր են, քանզի մի և նոյն
 մեղքը իւր պարագայէն առաւել կը ծան-
 րանայ, և երբեմն ալ տեսակը կը փոխէ:
 Սոր օրինակ ըրած գողութիդ հարուս-
 տի էր, եթէ աղքատի, հասարակ մեկի՝
 մի էր, եթէ եկեղեցոյ ապրանք, ուստի՝
 միայն ըսելովդ թէ գողութի ըրի, խոստո-
 վանանքը կատարեալ չլինիր, հասա՛ պա-
 ըագան ալ պէտք է խօսիս, որ գողութեդ
 չափն ալ իմացվի, վնդի՝ հասարակ մեկի
 ապրանք գողնալը գողութի է, սակայն
 եկեղեցոյ ապրանք գողնալը՝ գողութէն
 առաւել ծանր մեղք է, որ սեղանակապ-
 տութիւն կըսվի:

Մարդ բամբասելը մեղք է, սակայն՝
 կարգաւոր բամբասելը առաւել ծանր
 մեղք է:

Մեկումը հետ մեղանջելը մեղք է,
 սակայն ազգականի հետ մեղանջելը՝ ա-
 ռաւել ծանր մեղք է, ասորպէս իմացիր

ամմէն մեղքերն ալ, և որոշ որոշ խոստովանէ՛ . միայն թէ՛ յատուկ որոյ հետ մեղանչելո՞ւ մի՛ խօսիր . վն զի այն խոստովանուի չէ, հասցա՛ մասնուի է . թող ամմէն մարդ իւր մեղքը խոստովանի, կան ոմանք որք իրենց մեղքը թէթևցընելու համար՝ ուրիշի մեղքն ալ կը պատմեն . սակայն խոհեմ՝ քահանայն խօսեցընել չիաար :

Է Պարագայ երբ գործելու է . վն զի թէպէտ ամմէն մեղք՝ մեղք է . սակայն շատ զանազանուի ունի մի և նոյն մեղքը հասարակ օրը գործել՝ սք օրերը գործելէն . որպիսի է կիրակի և ածն օրերը, կամ պահոց օրեր . քանզի այսպէս օրեր՝ գործըված մեղքը առաւել ծանրութի կուսենայ . ուստի մեղացդ ժամանակն ալ պէ՛տք է որ խոստովանիս . կան անխիղճ մարդիկ, որ լուր օրերը գործի հետ զբարեալ լինելով՝ մեղք չեն կարէր գործել . սակայն կիրակի և ածն օրերը մեղք ալ չեն թողուր որ չեն գործեր . բայց բարեպաշտ քրիստոնէաները յայնպիսի օրերը առաւել զգուշութի կընեն, որ պէտք եղածն ալ այն է :

Դ Պարագայ մեղքը ուր տեղ գործեւլդ է • զոր օրինակ հասարակ տեղ՝ էթէ սք տեղ • վս զի՝ սք տեղ գործըլած մեղքը առաւել ծանր մեղք է՝ քան հասարակ տեղ գործըլածէն • մանաւանդ՝ հասարակ տեղ մեղք չի համարըլածը սք տեղերը մեղք կը համարըլի • զոր օրինակ դուրս տեղ խօսիլ, ծիծաղիլ, քնանալ, մեղք չէ • Բայց եկեղեցոյ մէջ ասոնք որ ընեսնէ մեծ մեղք է:

Դ Պարագայ մի և նոյն մեղաց որքան ութին է • վս զի՝ մեղքը մեկ անգամ գործըլի՝ մեղք է • Բայց էթէ կրկին անգամ գործըլի՝ կը ծանրանայ • և որքան առաւել կըրկնըլի՝ այնքան առաւել կը ծանրանայ • ուրեմն պէ՛տք է որ պարագայիւք խոստովանիս:

Ի վերջոյ՝ խոստովանութիւնը դիտաւորութե՛ք պէ՛տք է ըլլալ • զի առանց դիտաւորութե՛ խոստովանութիւն է իբրև մարմին անհոգի • արդ՝ խոստովանորդւոյն դիտաւորութիւնը պէ՛տք է այս ըլլալ, թէ ես իմ մեղքերս որ օրինաւոր կերպիւ կը խոստովանիմ, և խոստովանահայրս ալ ո՞չորմեսցի ըսելով զիս կարճակէ՛ի մեղաց:

ի յերկինս ալ ես կարճըկվիմ. ահա այս
է քի ըսածը, * Սոր արձակեցես
յերկրի, եղիցի արձակեալ յերկինս.
|| Գաթ. ԺԴ. 19:

Հինգերորդ՝ պէտք է վճարու մն, որ է
գործած մեղքերուդ որ կատարելապէս
խոստովանեցար, փոխարէն ապաշխարանք
քաշել. թէպէտ արձակու մն առած ժա-
մանակըդ մեղքերդ քաւ վեցան, սակայն
անոնց պատիժները մնաց, որ կամաւոր
ապաշխարուք անոնք ալ պիտի քաւ վին:

Մ. յս տեղ պէտք է քեզ կատարեալ
հնազանդութի ունենալ խոստովանահօր,
որ ինչ ապաշխարանք դնէ քու վրադ փո-
խարէն խոստովանեալ մեղացդ, սիրով
և յօժարուք յանձնառու լինիս և ջանք
ընես անպակաս կատարել. ուստի ապաշ-
խարու թէ խորհուրդը կը ունայնացընեն
անոնք՝ որք կուզեն թէ խոստովանահայ
ըր իրենց ուզած ապաշխարանքը դնէ,
այդ ըլլալու բան չէ:

Յայտ է թէ, հիւանդը իւր ուզած
դեղերը առնելով չի բժշկվիր. հապա՛ բը
ժըշկին տրված դեղերը պիտի առնէ, որ
բժշկվի: Հոգևոր բժիշկ է խոստովանա-

Տայրդ , քու հոգևոր հիւանդութիւներդ
խոստովանանքէդ իմացաւ . հիմայ պէտք
է որ անոնց յարմար դեղ տայ քեզի . քան
զի հոգևոր դեղերն զանազան են ըստ մե
զացն : Ըյս դեղերուն յարմար գործա
ծութիւն խոհեմ խոստովանասայրը գիտէ :

Իսկ դու՛ որ խոստովանորդի ես , քո
կողմանէ պէտք եղածն է խոստովանա
հօրդ կատարեալ հնազանդութիւն : Ըյաշ
խարուէ խորհրդոյն վրայ այլևս պէտք
էր շատ քան խօսիլ , սակայն կը թողում
որ մնացեալները խօսին քարոզիչք յա
տենի՛ և խոստովանահարք առանձին ,
այսքանս առ սյժմ բաւականասցի :



Եսկ արդ՝ ո՞վ բարեգաշտ հաւատա-
ցեալք՝ սիրելի որդիք մեր ՚ի քս, ահա
մեր հոգևոր հայրուէ պարտաւորութիւն
փոքր ՚ի շատե և լա մասին կատարեցինք:
Քրիստոնէական սբ հաւատոյ վարդա-
պետութիւն՝ ձեր հասկնալու կերպիւ՝
աամկական ոճով ձեզի իմացուցինք:

Եսկէց ետև կը մնայ որ՝ դուք ալ ձեր
պարտաւորութիւն կատարէք: Այս զի
սբ գիրքը կըսէ, * Օ մարդն իսկզբանէ
յանձնիշխան կամս ստեղծ անձ, զհուր
և զընուր եդ առաջի, զի յոր կամեցի
միտեցի զձեռս իւր. զի առաջի մարդոց
է մահ և կեանք. || սիրա. ժե. 14:

Եպա ջանք ընենք քրիստոնէական սբ
հաւատոյ վայելուչ դործքերով մեր հո-
գին զարդարել, և իբրև զկոյս մի սբ
յանդիման առնել քի, և առնուլ ՚ի
հմանէ զօրհնութի և զփառս յաւի-
տեանս. ամէն:



8w

10w

Decorative border line with repeating floral motifs.

Decorative border line with repeating floral motifs.

Handwritten text in Cyrillic: 'Т 4 Р 0 П Т 0 Т Т 0'

Handwritten text in Cyrillic: 'П-9, П-9, ЗЕЛЕНАЯ'

Vertical decorative border line with repeating floral motifs on the left side.

Vertical decorative border line with repeating floral motifs on the right side.



Handwritten numbers in a box: 205 / 4-29

Handwritten text: '1 n 9 6 s'

Handwritten text in Cyrillic: '30 Р 0 П Т 0 Т Т 0'

Decorative border line with repeating floral motifs at the bottom.



